№ 9—10 (235) XXIII ՏԱՐԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ—ՀՈԿՏԵՄԲԵՐ 1913

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENEVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

ՍԻՄԷՕՆ ԶԱՒԱՐԵԱՆ

Նոր, անասելի վիշտ, նո՛ր, աղէտալի հարուած — Նորէն սուգ ու հեծեծանք մեր շարքերուն։ ՍԻՄԷՕՆ ԶԱՒԱՐԵԱՆԸ չկայ այլ ևս... Ո՞վ անգութ ճակատագիր... Գերեզման է իջնում հայ ժողովրդի ամենամաքուր և ամենաինքնատիպ զաւակներից մինը, հայկական ռամկավարութեան հմտազուած դրօշակակիրը, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան հոչակաւոր քարոզիչը։

Անհուն վիշտ է պատում մեզ այս տողերը շարելիս,—մենք որ դեռ նոր, ընդամենը վէց ամիս առաջ չարաշուք հեռագրից՝ տացել էինք մեր սիրելի ընկերոջ նամակն ու խորհուրդները, գրուած սովորական տենդով ու աճապարանքով։ Ինչքա՜ն սարսափելի և անողորմ ես, մա՜հ...

Ո՞վ կարող էր մտածել, թէ այդ կուռ ու ջլուտ մարմինը, որ այնքան կոփուել էր անվերջ ու չարքաշ թափառումների մէջ, ֆիզիկական և հոգեկան անհաշիւ զրկանքներում, որ մի ճշմարիտ հնոց էր անսահման էներգիայի—մշտապէս եռուն, վառուող ու հրդեհուող—ո՞վ կարող էր մտածել, թէ նա այդպէս վաղաժամ պիտի հրաժեշտ տար մեզնից... պիտի կտրուէր այդ գեղեցիկ կեանքի թելը, որ տասնեակ տարիներ ալէկոծուել ու տանջուել էր իր ժողովրդի ցաւերով և անդուլ զոհաբերուել իր պաշտամունք — Գաղափարին...

Լացի՛ր, հա՜յ երիտասարդութիւն—էլ չկայ քո սիրած ընկերն ու վարպետը. 23 տարի շարունակ, Կովկասի մի ծայրից միւսը՝ „Զաւարեան" անունը Ազնուութեան ու Անձնուիրութեան անուն էր, կռուի և Յոյսի անուն էր, Ուղղամտութեան և անկաշառ Վեհանձնութեան անուն էր։

Լացի՛ր, հայ մտաւորականութիւն. մարեց քո լաւագոյն ճրագներից մինը. շատ չեն մեր մտաւոր անապատի մէջ Զաւարեանի պէս համայնագէտ իմացականութիւններ և բարոյական տիպարներ։

Ողբա՛, հա՜յ ժողովուրդ, անտէր, գաղազուած հայ պրոլետարիատ, գնա՜ց քո դարվիշ-քարոզիչը որ հոգով ու մարմնով ձուլուել էր քեզ հետ, որ ճաշակեց կեանքի բոլոր դառնութիւնները յանուն քո բարեկեցութեան, որ սիրում էր քեզ մի քնքոյշ, օրգանական, ընազդային սիրով... և որ իբրև մի անողոք խարազան, կուսակցութեան գերագոյն դատաւոր, գրոհ էր տալիս շարունակ, աջ ու ձախ, մի սրբազան, ինքնայորդոր ցասումով, մտրակում էր քո ծոցի մէջ բուն դրած ամեն տեսակ ցեցերի, մտրակում էր ամեն բան՝ ինչ որ կեղծ է, վատ է, ստոր է, գռեհիկ է...

Ողբա՛, դաշնակցական երիտասարդութիւն... Քրիստոֆորից յետոյ — Սիմէոնը... Ա՛ռ գլուխդ ափերիդ մէջ և ընթացք տուր արցունքներիդ...

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ԵՕԹՆԵՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ

ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

(ԱՄՓՈՓՈՒՄ ԵՒ ՔԱՂԻԱԾՔՆԵՐ)

Զ.-ՐԴ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻՆ որոշման համաձայն Է.-ՐԴ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԸ պիտի գումարուէր 1913-ի յուլիս ամսուն։ Բայց մէկ կողմէն Բալկանեան պատերազմի հետևանքով Թիւրքիոյ անցուցած ծանրաձանր տագնապը և անոր զուգընթաց մտահոգութիւնները արգելք եղան, որ նախնական պատրաստութիւնները փութացուին։ Միւս կողմէն Օսմ. Հայաստանի ղեկավար մարմիններու կողմէ դրուած պահանջը՝ ԺՈՂՈՎԸ ԵՐԿՐԻՆ .... ՄԷՋ գումարելու ժամին, ձգձգեցին ԺՈՂՈՎԻՆ վերջնական հրաւիրումը, որ, ուր ուրեմն, տեղի ունեցաւ ՄԵԾ ՀԱՅՔԻ ՄԷՋ։

ԺՈՂՈՎԸ բացուեցաւ օգոստոս 17-ին, իրաւասու 18 մարմիններէն 14-ի մասնակցութեամբ, տևեց մէկ շաբաթ, ունենալով 14 նիստ։

ԺՈՂՈՎԸ սեղմ օրակարգ մը ունէր, նուիրուած հասուն ու անմիջական լուծումի պահանջող խնդիրներու։

Օրակարգի ապառումէն ետք հարկ դատուեցաւ շեշտել, թէ անխախտ և ի զօրու կը մնան նախորդ Զ.-ՐԴ ԸՆԴՀ ԺՈՂՈՎԻ բոլոր այն որոշումները, որոնց չէ դպած այս Է.-ՐԴ ԺՈՂՈՎԸ իր նոր որոշումներով։ Ասոնց ամփոփումը ահա կը բերենք ստորև։

Ա. Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՅԼԵՒԱՅԼ ՀԱՏՒԱԾՆԵՐՈՒ (section) ՓՈԽՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Նկատելով, որ հայ ժողովրդի բաժնուած ԸԼԼԱԼԸ տարբեր քաղաքական հատուածներու՝ հետևանք է մրցակից դրացի պետութիւններուն նուաճողական և արկածախնդիր քաղաքականութեան, որմէ տնտեսապէս և բարոյապէս տուժած են թէ յաղթողները և թէ պարտուածները,

Նկատելով, որ ապագային ևս՝ նորանոր պատերազմներու պատճառելիք բարոյական, նիւթական և կեանքի անհուն զոհերուն հանդէպ չկայ ոչէ գրաւական թէ մրցակից պետութիւններու սահմաններուն փոփոխումէն կրնայ արմատապէս ապահովել հայ աշխատաւոր դասին տնտեսական, ազգային և մարդկային իրաւունքները, ընդունելով միանգամայն, որ ամէն մի կուսակցական, իբրև որոշ պետութեան մը քաղաքացի, իր պետութեան մէջ վայելած համապետական իրաւունքներուն հետ ունի և՛ համապատասխան պարտականութիւններ, զինքը պարփակող պետութեան հանդէպ,

ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԸ Կ'ՈՐՈՇԷ.

1. Քաղաքական բարդութիւններու ատեն՝ համախորհուրդ ընկերվարական միւս կուսակցութիւններուն՝ օրինական բոլոր հնարաւոր միջոցներով կանխել զինուած ընդհարումները. իսկ պատերազմի պարագային՝ ամէն քաղաքացի կը կատարէ իր քաղաքացիական պարտականութիւնը իր պետութեան հանդէպ։

2. Իր գործունէութեան մէջ հանդիսացող այլևայլ պետութիւններու մէջ, Դաշնակցութիւնը իր ծրագրին գործադրութիւնը կը հետապնդէ համաձայն տեղական, ցեղագրական, տնտեսական և քաղաքական պայմաններուն, ձեռք-ձեռքի՝ իւրաքանչիւր պետութեան մէջ իրեն համախոհ կուսակցութիւններուն և շահակից տարրերուն։

Բ. ԹԻՒՐՔԻԱ

ԴԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

Լսելով զեկուցումներ Հայկական Խնդրի լուծման համար մինչև օրս կատարուած դիւանագիտական յարաբերութիւններու և առաջադրութիւններու մասին, որոնք դժբախտաբար հիմնուած են եղեր աւելի տեղական, քան ընդհանուր կուսակցական տրամադրութիւններու վրայ,

Նկատելով, որ յեղափոխական կուսակցութեան մը դիւանագիտական քայլերը մեկնելով կուսակցութեան ընդհանուր ուղղութենէն, պէտք է որ միշտ յենուին կուսակցութեան լայն զանգուածներու գիտակցութեան և անկէ բղխող իրական ուժի, պահանջներու և ձեռնարկներու վրայ,

ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԸ Կ'ՈՐՈՇԷ.

1. Շարունակել համերաշխ գործակցութիւնը միւս հայ խաւերու հետ, մնալով խորհրդատուի դերի մէջ անոնց հանդէպ։

2. Ճշդել Հայաստանի բարեկարգութեան այն „նւազագոյն պահանջները", որոնց իրագործումին սիստեմատիկօրէն մի ամամանակ պիտի հետապնդեն կուսակցութեան բոլոր կեդրոնական մարմինները, ոչ միայն եւրոպական դիւանագէտներուն և Թիւրք կեդրոնական կառավարութեան, այլ և յատկապէս Հայաստանի մէջ, տեղական իշխանութիւններու քով։

3. Ազդարարել բոլոր մարմիններուն և ընկերներուն, որ խստիւ զգուշանան, մանաւանդ այս առթիւ, շեղելէ կուսակցութեան ժողովներով, որոշումներով և կանոնագրով իւրաքանչիւրին վերապահուած պարտականութիւններու և կարգապահութեան սահմաններէն։

4. Ի պահանջել հարկին, յանուն կուսակցութեան պաշտօնապէս հրապարակ դալ՝ թիկն տալով ժողովրդական գանգուածներու։

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԴԻՐՔԸ ԱՌԱՋԻԿԱՑ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԱՆԴԷՊ

Նկատելով, որ Խորհրդարանը այն ասպարէզն է, ուր հնարաւոր է օրէնսդրական ճամբով, աստիճանաբար և սիստեմատիկօրէն հետապնդել Հայաստանի բարեկարգութեան համար մեր նւազագոյն պահանջներուն իրագործումը,

Նկատելով, որ Օսմ. Խորհրդարանին մէջ ցեղերու համեմատական ներկայացուցչութեան սկզբունքը ամենէն հասունցած և հրատապ խնդիրն է պետական բարենորոգումներու շարքին,

ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԸ Կ'ՈՐՈՇԷ.

Համերաշխօրէն ազգային կուսակցութիւններուն և Ազգ. Կեդր. Վարչութեան հետ, Թիւրք կառավարութենէն պահանջել ընտրական օրէնքներու բարեփոխում մը՝ ապահովելու համար հայ ժողովրդին իր թիւին համաձայն ներկայացուցչութիւն մը Օսմ. Խորհրդարանին մէջ։ Մերժումի պարագային՝ համազգային բոյկոտ հռչակել առաջիկայ խորհրդարանական ընտրութիւններու դէմ։

Ծանօթ. — Եթէ ի նիսս գումարուի 1912-ին լուծուած Խորհրդարանը, երեսփոխան ընկերներ հաւամաբար պատնառաբանուած հրաժարագիր մը մատուցանելով հայկական բողոքներու եւ պահանջներու մասին, խմբովին կը հեռանան Խորհրդարանէն։

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԴԻՐՔԸ ԻԹԹԻՀԱՏԻ ՀԱՆԴԷՊ

Նկատելով, որ սահմանադրական հինգ տարիներու տևողութեան միջոցին՝ „Իթթիհատ վէ Թերաքգը" կուսակցութիւնը հակառակ բազմաթիւ հանդիսաւոր խոստումներու, հիմնապէս գոհացում չտուաւ հայ ժողովրդի և Դաշնակցութեան ամենէն տարրական պահանջներուն (ինչպէս անդորրութիւնն ապահովող երաշխիքներ, հողավէճի լուծում, կրթական բաժնի յատուկ հատուցում, հայ տարրի համեմատական ներկայացուցչութիւնը՝ տեղական և համապետական մարմիններու և պաշտօնէութեան մէջ և այլն), և իր դրժումներով ու ձգձգումներով հարկադրեց Դաշնակցութիւնը խզել իր յարաբերութիւնները Իթթիհատի հետ՝ 1912 մայիս 5-ի իր պահանջագրով,

Նկատելով, որ հակառակ վերջին ազէտաւոր պատերազմին, որ երեւան հանեց Թիւրքիոյ ներքին փտութիւնը և երկրին անցուցած ցնցող տագնապին՝ Իթթիհատը չ'որդեգրեց քաղաքական և տնտեսական նոր և առողջ ուղղութիւն մը, որ փրկէր Թիւրքիան իր վերջնական անկումէն,

Նկատելով, որ Իթթիհատը անուանապէս և ձևականօրէն միայն ընդունած է պպակեդրոնացման սկզբունքը, թէ արաբ ազգութեան և արաբական շրջանի պահանջներուն տրուած գոհացումը մեծ մասով մը ճանաչում է արդէն իսկ անոնց իրապէս վայելած իրաւունքներուն, թէ իսլամ տարրի մը եղած զիջումն է ատ, հետևաբար անվթար կը պահպանի Թիւրքիոյ աւանդական քաղաքականութիւնը, որ պետութեան իրրև խարիսխը կ'ընդունի իսլամ տարրերու առանձնաշնորհեալ դիրքը,

Համոզուած, որ այդ պայմաններու տակ չկրնար երաշխաւորուած նկատիլ ո՛չ հայ ժողովրդի գոյութեան ապահովութիւնը, ո՛չ անոր իրաւահաւասարումը և անկաշկանդ զարգացումը, ո՛չ ալ օսմ. պետութեան ներքին խաղաղութիւնը, բարգաւաճումը և բաղկացուցիչ ազգերու միջև համերաշխութիւնը,

Ընդունելով վերջնապէս, որ իշխանութեան ղեկն ունեցող կուսակցութեան մը հետ մնայուն և ընդհանուր համերաշխութիւնը ակամայ մասնակից և պատասխանատու պիտի դարձնէ Դաշնակցութիւնը օսմ. կառավարութեան այլևայլ ձեռնարկներուն, տկարացնելով միևնոյն ատեն Դաշնակցական շարքերու ինքնամփոփումը և իր սեփական ուժերուն վստահումը,

ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԸ Կ'ՈՐՈՇԷ.

1. Արդէն առաջադրուած պահանջներու ամբողջական իրագործումը հետապնդել անկախօրէն, պահպանելով բարեկամական յարաբերութիւններ, անհատապէս կամ հաւաքաբար, բոլոր այն տարրերու կամ խմբակցութիւններու հետ, որոնք համախոհ և համակիր կը գտնուին Դաշնակցութեան՝ անոր հետապնդած ընդհանուր պետական քաղաքականութեան և բաղկացուցիչ ցեղերու համար ազգային իրաւունքներու երաշխաւորմանը մէջ։

2. Հրատարակութեան տալ „Իթթիհատի" հետ Դաշնակցական յարաբերութիւններու խզման մանրամասն պատմութիւնը, վաւերագրերով հանդերձ։

ՀԱՅԱՔԻԻՐԴ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Նկատելով, որ ժամանակէ մը ի վեր քիւրդ ժողովրդի այլևայլ խաւերուն մէջ, իսկզբան թէև տարտամ, աստիճանաբար, որոշ կերպարանաւորում մը կը ստանայ ազգային գիտակցութիւնը,

Նկատելով, որ ազգային շահերու այդ աղօտ գիտակցումն իսկ պատճառ եղած է, որ քիւրդերու կողմէ փոր-

ձեր կատարէին մերձենալու և համերաշխելու Դաշնակցութեան հետ, ընդհանուր բարեկարգութեան վերաբերող խնդիրներու առիթով,

Շեշտելով սակայն թէ քիւրդ ազգային գիտակցութեան հպդ տարտամ շարժումը, որ առաջ կը մղի գլխաւորապէս աւատական տարրերու ձեռքով, արգասաւոր և բաղձալի կրնայ հանդիսանալ հայ և քիւրդ աշխատաւոր տարրերուն այն պարագային միայն, եթէ չնպաստէ աւատականութեան արդէն խարխուլ շէնքին վերակենդանացման ու անոր անդրագոյն զարգացումին։

Մատնանշելով նաև թէ օսմանեան կառավարութիւնը, պետութեան գերագոյն շահերու տեսակէտէն իսկ հարկադրուած է ուշ կամ կանուխ վերջ մը դնելու աւատականութեան մնացորդներուն Փոքր Ասիոյ մէջ, հետևաբար բնական դաշնակիցը կրնայ համարուիլ հայ, քիւրդ և թիւրք աշխատաւորութեան՝ անոր մղած պայքարին մէջ աւատականութեան դէմ,

ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԸ Կ'ՈՐՈՇԷ.

1. Նպաստել քրդերու ազգային գիտակցութեան զարթնումին և զարգացմանը, համերաշխ պայքարով մը ապահովելու համար երկու ժողովուրդներուն ընդհանուր եղող շահերը։

2. Պաշտպանել հայ և քիւրդ աշխատաւորութիւնը աւատականութեան դէմ, հետամտիլ այդ դրութեան ոչնչացումին, աջակցելով կառավարութեան այդ նպատակով անոր ձեռք առնելիք միջոցներուն մէջ։

ՀՈՂԱՎԷՃ

Իւրացնելով Զ.-րդ ԸՆԴՀ. Ժողովի նկատումները հողավէճի մասին,

Շեշտելով, որ հողավէճի լուծման համար առժամեայ նոր օրէնքին հոչակումը անբաւարար է արդար և շուտափոյթ լուծում մը ապահովելու այդ ծանրակշիռ խնդրին,

Նկատելով, որ շատ տեղ բռնատէրերու սարսափէն հայ գիւղացիները ցարդ համարձակած չեն և ոչ ալ յոյս կայ, որ այսուհետև համարձակին իրենց նախաձեռնութեամբ իրենց դատը հետապնդելու տեղացի յափշտակիչներու դէմ,

Նկատելով, որ վարչական ժողովները, որոնց իրաւասութեան յանձնուած է հողավէճերու լուծումը, գրեթէ շնչին բացառութեամբ կազմուած են այնպիսի տարրերէ, որոնք ազգակցական և տնտեսական շահերով կապուած են բռնատէր յափշտակիչներու հետ,

ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԸ Կ'ՈՐՈՇԷ.

1. Պնդել ուր որ անկ է և հետամուտ լինել, որ հողավէճը լուծուի, շրջիկ խառն յանձնախումբերու միջոցով, որոնց անդամներուն գրեթէ կէսը հայ՝ ընտրուած Ազգ. Կեդր. Վարչութենէն։

2. Հետամուտ լինել, որ դրամական հատուցման սկզբունքը կիրարկուի այն պարագային համար, երբ արդի տէրերը կամ իսլամ գաղթականներ կառավարութեան ձեռքով գետեղուած և կամ՝ իրենք տնտեսական զրաչ հարստութիւն մը ստեղծած են այդ հողերու վրայ, բայց՝ ոչ մէկ հատուցում աւաձկաբար զանոնք բռնագրաւողներուն։

3. Հրահանգել բոլոր մարմիններուն, որ անյապաղ ձեռնարկեն պատրաստել իրաքանչիւրն իր շրջանի բռնագրաւուած հողերու ցուցակը և յամառօրէն ու սիստեմատիկ հետապնդումով մը տեղական իշխանութիւններու քով աջակցին զրկուած գիւղացիներուն՝ իրենց հողերու տիրանալուն։

ԱԶԳԱՅԻՆ-ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Նկատելով, որ Ազգ. Սահմանադրութեան թերութիւններուն հետևանքով հայ ժողովրդի այլևայլ խաւերը, իրենց գիտակցութեան ու իրական ուժերուն համեմատ չեն ներկայացուած Ազգ. Կեդր. Ժողովին մէջ, թէ Պօլսի գաղութին ձայները կը գերակշռեն բնագաւառի միլիոնաւոր հայութեան ձայները, պարագայ մը, որ կը զրկէ ժողովրդի ստուարաթիւ զանգուածները՝ հետևաբար մեր շարքերը իրենց ուժերուն պատասխանող չափով մը ազդելու և ուղղութիւն տալու են Ազգ. Կեդր. Ժողովին։

Նկատելով, որ ժողովրդի լայն խաւերը՝ անգիտակ այդ պարագաներուն, կուսակցութիւնը պատասխանատու կը նկատեն Ազգ. Կեդր. Ժողովի և Ազգ. Կեդր. Վարչութեան անձրագիր և յեղյեղուկ գործունէութեանը,

Շեշտելով մասնաւորապէս, թէ կուսակցութեան ղեկավար մարմինները ոչ ի վիճակի են և ոչ ալ հարկ է որ շեղին իրենց բուն կուսակցական գործերէն, մշտական քննթրոլ մը կիրարկել կարենալու համար Ազգ. Կեդր. Ժողովի դաշնակցական երեսփոխաններուն հանդէպ,

ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԸ Կ'ՈՐՈՇԷ.

Մինչև Ազգ. Ժողովին վերակազմումը Ժողովրդական ներկայացուցչութեան հիմերու վրայ, Ազգ. Կեդր. Ժողովի Դաշնակցական հատուածին անդամները կը գործեն իրենց խղճին թելադրութեամբ, հաւատարիմ մնալով կուսակցութեան ծրագրին և որոշումներուն։

Արևմտեան Բիւրօյի համաձայնութիւնը պարտաւորիչ է իրենց՝ հայկական բորենորոգումներու և պետական բնոյթ ունեցող գործերու համար միայն։

Գ. ՌՈՒՍԻԱ

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՌՈՒՍԻՈՅ ՄԷՋ

Գիտակցելով, որ ընկերային-քաղաքական շարժումները և մանաւանդ տնտեսական փոխ-յարաբերութիւններու պատկանող բաղդ խնդիրները յաջողութեամբ կրնան առաջ մղիլ այն պարագային միայն, երբ կը բղխին տեղական իրական պայմաններէ և կրնան վարդանալ, երբ անոնց գիտակցումը կեանքի մէջ կ'արտայայտի գործնական քայլերով,

Նկատելով, որ Ռուսիոյ հայ աշխատաւոր դասակարգը ենթակայ է բազմազան և ինքնայատուկ կեղեքումներու և զրկանքներու, որոնք են. ա) Մայրենի լեզուի և հայ դպրոցներու իրաւազուրկ և անհաւասար դիրքը. բ) Հայ գիւղացու սեփական հողաբաժիններու սակաւութիւնը,

բաղդատմամբ ռուս և ոչ-ռուս դրացիներու ունեցածին և պետական հողերու համար գոյ եղող օրինական սահմանափակումները. գ) Իշխող դասերուն, ռուս եկեղեցու և ռուս տարրի օգտին միապետական ռէժիմի կողմէ ստեղծուած արտօնեալ դիրքը, որ կ'արտայայտի մասնաւորապէս հայ տարրի սահմանափակ ներկայացուցչութեամբը Պետական Դումայի մէջ, բաղդատմամբ դրացի ռուս, վրացի, Նորմիսկ Բաթումի-Սուխումի իսլամ տարրերուն. դ) Եւ վերջապէս արդիւնաբերական, առևտրական և վաշխառուական դրամագլուխներու կեղեքումները։

Համոզուած, որ կեանքի իրական պայմաններէն բղխող և գործնական քայլերով առաջ մղուած այդպիսի պայքար մը, զօրացնելով դաշնակցական բանակի ուժն ու գիտակցութիւնը, բաղձալի արդիւնքներու կրնայ յանգել, թէ՛ պետական վերակազմումի և թէ՛ դրացի ազգերու հետ ունենալիք հաւասարութեան կրկնակ տեսակէտներէ,

ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԸ Կ'ՈՐՈՇԷ.

Ռուսիոյ մէջ Դաշնակցական գործունէութիւնը կը հետապնդէ հետևեալ կէտերու իրագործումը.

1. Ազգային դպրոցները պահպանելով հանդերձ իրենց ինքնավարութիւնը, հաւասար իրաւունքներ պիտի վայելեն պետական դպրոցներու հետ, և հայերէն լեզուն, ինչպէս նաև տեղական լեզուները, պետական լեզուին համազօր պիտի գործածուին, իւրաքանչիւրը էր պատկան շրջանի պետական և հանրային հաստատութիւններուն մէջ։

2. Ապահովել հայ բնակչութեան թիւին համեմատ երեք հայ երեսփոխաններու ընտրումը Պետական Դումային։

3. Աւելցնել հայ գիւղացու հողաբաժինները, խափանելով արդէն գոյ սահմանափակումները, ոռոգելով անջրդի հողերը և հայ հայրենիքներուն յատկացնելով պետական կոչուած անտառ-արտօները։

4. Հիմնել սպառողական-ընկերական վարկային հաստատութիւններ հայ գիւղական շրջաններու, ինչպէս նաև բանւորական միութիւններ մեծ քաղաքներու մէջ։

5. Պետական վերակազմումի գործի մէջ աշխատել ընկերվարական և փոքր ազգութիւններու պատկանող կազմակերպութիւններու հետ ձեռք ձեռքի։

Դ. ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Ընդհանուր Ժողովը լսելով Պարսկաստանի կացութեան մասին ներկայացուած տեղեկագիրն ու զեկուցումները, ինչպէս նաև պատգամաւոր ընկերներու հաղորդած տեղեկութիւնները,

Նկատելով, որ անգլեռուս համաձայնութեան և գործակցութեան հետևանքով Պարսկաստանի մէջ ստեղծուած քաղաքական կացութեան հետ հաշտուած լինել կը թուին պարսիկ ռամկավար և առաջդիմասէր տարրերը,

Հեշտելով սակայն, թէ այդ կացութիւնը ինքնին անհաշտելի է Դաշնակցութեան կողմէ ռազմական աջակցութեան մը արդի ռէժիմին,

ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԸ Կ'ՈՐՈՇԷ.

1. Վաւերացնել Թէհրանի և Ատրպատականի Կեդր. Կոմիտէներու բոլոր այն տնօրինութիւնները, որոնք կը վերաբերին դաշնակցական զօրախումբերու յրուումին Պարսկաստանի մէջ։

2. Ի զրու պահել Զ.-րդ ԸՆԴՀ. Ժողովին Պարսկաստանի վերաբերող որոշման 3-րդ կէտը, որ էր. „Շարունակել սերտ յարաբերութիւն պահպանել ռամկավար տարրերու հետ, գործակցելով անոնց այն բոլոր պարագաներուն մէջ, երբ անհրաժեշտութիւն կը ներկայանայ պաշտպանել և ամրապնդել սահմանագրական կարգերը։ Աշխատել անոնց հետ՝ Ա) Ապահովել տալու՝ հիմնական օրէնքներով՝ մեր ազգային մշակութային ինքնավարութիւնը և պարտադիր տուրք գանձելու իրաւունքը Պարսկահայոց Ազգային Ժողովին համար։ Բ) Ջնջել տալու „Կանունի Էսասիէ" սահմանադրական ոգիին հակասող բոլոր սահմանափակումները, որոնք հիմնուած են ազգային կամ կրոնական խորութիւնների վրայ (այսպէս, ոչ-միւսլիմաններու դէմ դրուած արգելքը պետական բարձր պաշտօններ վարելու և զինուորագրութեան մասնակցելու մասին և այլն)։

Ե. ՊՐՕՊԱԳԱՆԴԵՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳՐԱՒՈՐ

Ա.—„ԴՐՕՇԱԿ"

1. Յանձնարարել բոլոր Կ. Կոմիտէներուն, որ հետամուտ լինին պաշտօնաթերթը տարածելու, յատկապէս ջանալով բաժանորդագրել բոլոր խումբերը։

2. Խմբագրական արդի կազմին աւելացնել նոր խմբագիր մը, աւելի ևս կանոնաւորելու համար „Դրօշակ"ի հրատարակումը և անոր յարակից գործերը։

3. Կեդր. Կոմիտէները ամեն ամիս տեղեկագիր կուղարկեն իրենց շրջաններուն մասին, „Դրօշակ"ի մէջ հրատարակելու համար։

4. „Դրօշակ"ի մէկ մասը (առ առաւելն կէսը) յատկացնել Դաշնակցութեան վերաբերող նիւթերու հրատարակմանը։

Բ.—„ԱԶԱՏԱՄԱՐՏ"

1. Արևմտեան Բիւրօն պատասխանատու է „Ազատամարտ"ի ուղղութեան և վարչութեան համար։ Անոր խմբագրական և վարչական մարմինները կ'ընտրուին Արևմտեան Բիւրոյէն և անմիջաբար պատասխանատու են անոր։

„Ազատամարտ"ի խմբագրապետը խորհրդակցական ձայնով կը մասնակցի Արևմտեան Բիւրոյի նիստերուն։

2. „Ազատամարտ"ը պարտաւոր է կանոնաւորապէս վճարումներ ընել կուսակցութեան Արկղին, ի հաշիւ իր պարտքին, հրատարակութեան թիրաժի վրայ յառաջատուական սկզբունքով։

— Կեդր. Կոմիտէները պարբերաբար կը տեղեկագրեն ի գիտութիւն պատկան Բիւրոներուն իրենց բոլոր դիտողութիւնները կուսակցութեան պաշտօնական և կիսապաշտօնական թերթերու մասին։

Գ.—ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդհանուր Ժողովը տեղեկանալով, որ Արևմտեան

Բիւրօյի կողմէ ընտրուած Պրօպագանդի Մարմինը թերացած է կատարելու իրեն առաջադրուած պարտաւորութիւնը,

1. Կը յանձնարարէ նոյն Բիւրօյին նոր մարմին մը կազմել, որ ստանձնէ կուսակցական բոլոր հրատարակութիւններու հոգը, համաձայն Զ.-րդ Ընդհ. Ժողովի հրահանգներուն։

2. Կ'որոշէ նախորդ շրջանին մէջ կուսակցական հրատարակութիւններէն գոյացած գումարը առանձինն պահել Արևմտեան Բիւրօյի տրամադրութեան տակ, իբր հիմնագումար մը՝ սահմանուած նոր հրատարակութիւններու։

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Նկատելով, որ Դաշնակցութեան 25-ամեակի առթիւ ընդհանուր բաղձանք կ'արտայայտի կուսակցութեան պատմութիւնը հրատարակել,

Ընդհ. Ժողովը կ'որոշէ.

Դիւրացնելու համար այդպիսի պատմութեան մը խմբագրման գործը, կ. Կոմիտէները նիւթեր կը հաւաքեն, իւրաքանչիւրն իր շրջանի դէպքերու մասին, հնարեղած մանրամասնութեամբ և կուղարկեն Բիւրոներուն։

Գանգատ. — Անհրաժեշտ է սուգել եւ լրացնել իւրաքանչիւր գաւառի մէջ տեղի ունեցած յեղափոխական դէպքերը, իրենց հեղինակներու եւ մասնակցողներու անուններով եւ բնականով, նահատակ ընկերներու մասին կենսագրական նօթեր՝ անոնց գերեզմաններու հեռումով եւ հնարաւոր չափով լուսանկարներ կուի վայրերու եւ գործիչներու։

ԲԱՆԱՒՈՐ

Հետեւելով Զ.-րդ Ընդհ. Ժողովի որոշումը, որ կը յանձնարարէր դրբոլոր ղեկավար մարմիններուն և ընկերներուն իրենց ուժերուն և ժամանակին որոշ մասը նուիրել բանաւոր պրոպագանդին, Ընդհ. Ժողովը սիրողաբար կը յանձնարարէ, որ Բիւրոները և մասնաւորապէս Հայաստանի Բիւրոն գէթ երկու ազատ անդամ ունենայ տրամադրելի՝ պարբերաբար շրջելու համար իրենց շրջաններուն մէջ։

Զ. ԿԵԴՐ. ՀԱՇԻՎԵՔՆՆԻՉԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Ընդհ. Ժողովը լսելով Կեդր. Հաշուեքննիչին կողմէ ներկայացուած ընդհանուր հաշուեկշիռը՝ գոհացուցիչ չգտաւ զայն։ Եթէ արդարև գտնուեր են մարմիններ, որոնք թերացեր էին կանոնաւոր հաշուեւութեան մէջ, բայց Կեդր. Հաշուեքննիչն ալ միակողմանի ըմբռնած էր իր գործը, Կեդրոնական քննչի իր դերը սահմանափակելով և իջեցնելով լոկ հաշուապահի դերին։ Պատճառներու քննութենէն ետք, Ժողովը հարկ տեսաւ նոր տրամադրութիւններ ստեղծել Զ.-րդ Ընդհ. Ժողովին գծած կանոններուն, զանցառու մարմիններու նկատմամբ ալ ըրաւ կարգ մը յանձնարարութիւններ նորընտիր Կեդր. Հաշուեքննիչին։

ՅԱՒԵԼԵԱԼ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Վեց ամիսն անգամ բոլոր կեդրոնական մարմինները օրագրական ձևով կը ներկայեն իրենց հաշիւները Կեդր. Հաշուեքննիչին, որ պատրաստելով վեցամսեայ ընդհանուր հաշուեկշիռ մը, իր կարծիքներուն հետ կը հաղորդէ զայն խորհրդի անդամ մարմիններուն, անոնց դիտողութիւններն ալ լսելու համար այդ հաշիւներու մասին։

2. Ընդհ. Ժողով գումարուած տարին, բոլոր հաշիւները կը գոցուին Ընդհ. Ժողովի բացումէն երկու ամիս առաջ, որպէս զի Կեդր. Հաշուեքննիչը միջոց ունենայ պատրաստելու և առաջիկայ Ժողովին ներկայելու կուսակցութեան ընդհանուր հաշուեկշիռը և Տեղեկագիրը վերջացող Ժողովաշրջանին համար։

Գանգատ. — Ընդհանուր հաշուեկշիռը մանրամասնօրէն կը պատկերացնէ վերջացող ժողովաշրջանին մէջ կուսակցութեան գործունէութեան բոլոր գլխաւոր նիւթերը։ Իւրաքանչիւր սիւնակին, ինչպէս նաեւ համագումարի սիւնակներուն առջեւ կը նշանակուի նաեւ իւրաքանչիւր գումարի կամ նամագումարի ներկայած տոկոսը բաղդատմամբ Մուտքի ու Ելքի ամբողջին։

3. Այն մարմինները, որոնց հաշիւները չեն անցած Կեդր. Հաշուեքննիչի քննարկէն, կը զրկուին Ընդհ. Ժողովի մէջ ձայն ունենալու իրաւունքէն։

4. Բոլոր հաշիւներուն մէջ մանրամասնօրէն պէտք է որ նշանակուած լինին իւրաքանչիւր մարմնի պարտքերն ու պահանջները։

5. Ոևէ նպատակի համար ստացուած կամ յատկացուած գումարներ, կուսակցութեան ընթացիկ հաշուին պիտի պահուին, ապահովելու համար անոնց յատուկ գործածութիւնը։

6. Ամեն Բիւրօ քննիչի մը միջոցով կ'արձանագրէ, կը ստուգէ և կը վաւերացնէ իր շրջանին կուսակցական գոյքերուն կահացուցակն (*inventaire*) ու անոնց հաշիւները, որոնք կը պահուին Արևմտեան Բիւրօի քով, տեղեկագրելու համար Խորհուրդին կամ Ընդհ. Ժողովին։

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՆՈՐԸՆՏԻՐ ԿԵԴՐ. ՀԱՇԻՎԵՔՆՆԻՉԻՆ

1. 1908—1913 շրջանի ընդհանուր հաշուեկշռին մէջ նախորդ Կեդր. Հաշուեքննիչի կողմէ ցոյց տրուած բոլոր հաշուական թերացումներն ու թիւրիմացութիւնները սրբագրել տալ, յարաբերելով պատկան մարմիններուն հետ։

2. Մինչև 1913 դեկտեմբեր 31 հետամուտ լինել աւարտելու 1908—1913 յուլիս շրջանին կուսակցու-

թեան ընդհանուր հաշուեկշիռը, պատճէնը հաղորդելու համար Կեդր. Կոմիտէներուն։ Յարդ անսաստող կամ առանց բանաւոր պատճառի մը թերացող մարմիններու նկատմամբ անմիջապէս գործադրել կանոնական տրամադրութիւնները։

3. . . . . .

ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Նկատելով, որ տեղի ունեցած մասնակի համերաշխութիւնը արտասահմանի մէջ կը շահագործուի կարգ մը անհատներու կողմէ՝ երկրի ինքնապաշտպանութեան անունով, հաւաքելու համար գումարներ, որոց գործածութեան եղանակը դուրս կը մնայ Դաշնակցութեան քննթրոլէն, Ընդհ. Ժողովը կը յանձնարարէ Բիւրօներուն իր պատշաճ դատած ատեն պաշտօնական յայտարարութեամբ մը ազդարարել ի գիտութիւն հասարակութեան, թէ Դաշնակցութիւնը պատասխանատուութիւնը կը ստանձնէ միմիայն իրեն յանձնուած գումարներուն և հետևաբար հասարակութեան իրեն կը մնայ խորհիլ այն միջոցները, որով կրնայ ապահովել համերաշխութեան անունով իր տուած գումարներուն պատշաճ գործածումը։

Է. ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ

Ընդհ. Ժողովը նկատի ունենալով կուսակցութեան գործունէութեան ծաւալումը և գործնական կեանքին մէջ ունեցած արդէն հասունցած կազմակերպական պահանջները, հարկ տեսաւ հետևեալ փոփոխութիւնները ներմուծել կանոնագրին մէջ.

1. Հ. Յ. Դաշնակցութիւնը ունի երեք Բիւրօ. ա) Հայաստանի Բիւրօ, որուն շրջանն է Թիւրքիոյ վեց հայաբնակ և Տրապիզոնի նահանգները ՀԱՆԻԿի հետ։

բ) Արևմտեան, որու շրջանն է Արևմտեան Թիւրքիայ և գաղութները։

գ) Արևելեան, որուն շրջանն է Ռուսիա և Պարսկաստան։

Դիտող.—Առաջիկայ ժողովական շրջանի համար Բիւրօները կը միացնեն իրենց վրայ՝ Բիւրօի եւ պատասխանատու մարմնի, կանոնագրով նախատեսուած պարտականութիւններն ու իրաւունքները։

2. . . . . .

3. Օսմ. Խորհրդարանի Դաշնակցական հատուածը պարտաւոր է առաջնորդուիլ Արևմտեան Բիւրօի որոշումներով։ Այդ հատուածին ներկայացուցիչը խորհրդակցական ձայնով կը մասնակցի նոյն Բիւրօյի նիստերուն։

Դիտող — Նկատելով, որ կուսակցութեան արտաքին յարաբերութիւններուն մէջ տեղի կունենան թիւրիմացութիւններ, ենթադրելի այն պարագային, որ Կ. Պոլսի Կեդր. Կոմիտէն օսմանցիներու կողմէ սխալմամբ կը համարուի իբրեւ Թիւրքիոյ Դաշնակցութեան դեկավար մարմին —

Ընդհ. Ժողովը կ'որոշէ.

Կ. Պոլսի Կեդր. Կոմիտէն անուանել Բիւրանիոյ կամ Մարմարայի Կեդր. Կոմիտէ, թողնելով պատկան մարմնին, որ այդ երկու անուններէն մէկը ընտրէ։

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Դաշնակցութեան Խորհուրդը կը կազմեն երեք Բիւրօներու և Ամերիկայի Կեդր. Կոմիտէի ներկայացուցիչները։

Դ Ա Տ Ա Կ Ա Ն

Նկատելով դատական խնդիրներու անվերջ ձգձգումները,

Ընդհ. Ժողովը կ'որոշէ,

1. Դատական գործերու վերաքննութիւնը կ'աւարտի երեք աստիճանի մէջ, հետևեալ կարգով.

ա) Խմբի մէջ ծագած դատը կ'աւարտի կոմիտէի որոշումով (Խումբէն — Ենթակոմիտէ — Կոմիտէ)։

բ) Ենթակոմիտէի մէջ ծագած դատը կ'աւարտի Կեդր. Կոմիտէ որոշումով (Ենթակոմիտէէն — Կոմիտէ — Կեդր. Կոմիտէ)։

գ) Կոմիտէի մէջ ծագած դատերը կ'աւարտին շրջանային ժողովին մէջ (Կոմիտէէն — Կեդր. Կոմիտէ — Շրջ. Ժողով)։

դ) Կ. Կոմիտէներու, Բիւրօներու, Պատասխանատու Մարմիններու դատերը կը քննին Ընդհ. Ժողովին մէջ։

2. . . . . .

3. Դատի կ'ենթարկուին այն մարմինները, որոնք անփութութեան պատճառով օրինական պայմանաժամին մէջ չեն աւարտեր իրենց ներկայացած դատերը։

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ

— Ոստիկանութեան կամ պետութեան վարչական կազմին մէջ պաշտօն ստանձնող դաշնակցականները դադրած կը համարուին կուսակցութեան մէջ իրենց անդամակցութենէն։

— Երբ ոևէ ընկեր ոևէ առթիւ թոյլ կուտայ իրեն գործել կամ արտայայտուիլ այնպիսի եղանակով մը, որ կը հակասէ կուսակցութեան ԾՐԱԳՐԻՆ, ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԻՆ կամ ԿԱՆՈՆԱԳՐԻՆ, կամ որ տեղի կրնայ տալ ոչ-բաղձալի թիւրիմացութիւններու, պատկան մարմինը պարտաւոր է անյապաղ ձեռք առնել անհրաժեշտ միջոցներ՝ բաժնելու և ճշտելու համար, տեսակ պարագային մէջ, կուսակցութեան պատասխանատուութիւնը։

ՈՒԹԵՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Յառաջիկայ Ութերորդ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ որոշեցաւ գումարել 1914 յուլիս ամսուն սկիզբները։

Իրաւասու մարմինները պարտաւոր են ջանադիր լի-

նել, որ հաշիւները փակւին 1914 ապրիլ 30-ին, որ իրենց ժամանակին գումարւին շրջանային ժողովները և օրակարգի խնդիրները փութացնեն Բիւրոներուն, որպէս զի հնար լինի Ընդհանուր Ժողովին օրակարգը կազմել և հաղորդել իւ աւասու մարմիններուն, Ժողովին բացումէն առնւազն գէթ ամիս մը առաջ։

ԼՈՅՍԻ ՀԱՄԱՐ

Մի զուգադիպութեամբ, որ նշանակալից է ու խրատական, մեր օրերի այս ծանր, արիւնահոտ մթնոլորտում հայ ժողովուրդը տօնում է քաղաքակրթական մի փայլուն յաղթանակ, որ դարերի փառաւոր պատմութիւն ունի։

Հայ տառերի գիւտի հազարհինգհարիւր ամեակը և հայ տպագրութեան չորսհարիւր ամեակը. մէկը միւսի հետևանք և երկուսը միասին մի շքեղ ամբողջութիւն, որ մերինից շատ աւելի խոշոր ազգերի ինքնասիրութիւնը կարող էր շոյել։ Եւ այս լուսաւոր տօնը յատկապէս այս դժնդակ օրերում, երբ մեր չորս կողմում զէնքի շառաչիւնն է արձագանքում մահագուժօրէն և վառօդի ու հրդեհի ծուխն է բարձրանում, երբ ազգերի—քաղաքակիրթ ազգերի—յարաճուն սպառազինումը ժամանակակից մարդկութեան բախան է դնում եռուն վոլկանի վրայ—այս հպարտ տօնը փոքրիկ ժողովրդի խաւար, բարբարոս արևելքում։

Արդարև որքան հազւագիւտ, նոյնքան խորհրդանշական զուգադիպութիւն է այդ, որ չպիտի վրիպի ժողովուրդների կենսունակութիւնը նրանց քաղաքակրթական արժէքներին կապող անաչառ, խոհուն մտածողների հայեացքից։

Եւ մեր ներքին կեանքը, տարամերժօրէն ձախող պայմաններով հարուստ, էլ աւելի առեղծուածական է, որովհետև աւելի դժուարին է դարձնում այս անզուգական տօնը։ Մօտաւոր անցեալի անասելի փորձութիւններից, անլուր սարսափներից տակաւին ուշքի չ'եկած ազգը, որ վերածնութեան տարտամ յոյսերին զուգընթաց ապրում է նաև վաղայ սրամաշ, դաժան անստուգութիւնը, այնուամենայնիւ մի բնազդական, մի բուռն կորովով փարում է Լոյսի, իմացականութեան այս Մեծ Տօնին, վճիտ ու առնական ներշնչումներ քաղելով քաղաքակրթական բարձր վերյուշերի մէջ։

—

Համաշխարհային պատմութեան մեծ յեղաշրջումները, ինչպէս և ազգերի վերածնութեան աներկբայ կարելիութիւնները, նախ մեծ երազներ են, տեսողների, մարգարէների, նրանց հոգիների հզօր, անպարփակ ցնորքներ, որոնք իմացականութեան դռներն են բաղխում հրաբուխով դուրս ժայթքելու համար։ Մի Միքէլ Անջելլօ հայրենի երկրի ազատութեան համար հիւսած մրրկաշունչ երազներն է, որ հեղեղի պէս դուրս է թափել իր հսկայ հանճարով. Դանտէ աստուածային երազով է իջնում ստուերների աշխարհը հայրենի երկրի թշնամիներին ծունկի բերելու իր „Աստուածային կոմեդիայով“։ Քաղաքականապէս ընկճուած, բզկտուած ցեղի վարպետները, մարգարէներն են, որոնք յաճախ ասես գերբնական մղումով իրենց ժողովրդի ամենասև օրերին նրա վերածնութեան անձեռագործ խանձարուրներն են հիւսում.

Եւ հայ աշխարհի Գիրը մի չքնաղ երազ չէ՞ միթէ, որ Ցարօնի Հացեկաց գիւղի վիթխարի Հայը, Մեսրոպ Մաշտոց յղանում է որպէս միակ փրկութիւն, երբ տեսնում է իր ցեղի գոյութիւնը, որպէս նաւը փոթորկի ժամին՝ կորստեան վտանգի ենթակայ։ Ո՛չ, հմայիչ լեգենդա չէ պատմագրի աւանդածը, թէ Մեսրոպ „կէսքուն, կէս-արթուն, որպէս երազի մէջ տեսաւ լուսեղէն թաթը, որ գրում էր հայկական Այբ Բենը“։ Ստացածին, գողտր յերիւրանք չի կարող լինել այն՝ թէ հայ Ոսկեդարի Մեծ Վարպետը հայ բարբառի լուսեղէն ձևերը մի չքնաղ երազով հիւսեց։

Սահակ ու Մեսրոպ—հրաշագործ ամոլը հայ ժողովրդի երերուն բախտի Ե-րդ դարում—որպէս իսկական տեսողներ, հայրենի երկրի ինքնուրոյնութեան, հայ ժողովրդի ամբողջութեան սպառնացող վտանգը ճիշտ ժամանակին ըմբռնեցին։ Արդարև արևմուտքից՝ Հռոմի ու Բիւզանդիոնի արևելքից՝ Տիզբոնի փոխ առ փոխ հարուածների տակ հայ աշխարհի միութիւնն ապահովող Արշակունիների գահը վաղուց հետէ երերուն, մօտ էր գահավէժ խորտակելու։ Եւ նրա տեղ ոչինչ, ոչինչ, որ կարողանար աւատական մանր իշխանութիւնների, հայկական անանց սար ու ձորով բաժան բաժան երկրի իրար օտար, յաճախ իրար թշնամի գաւառները մի ընդհանուր իդէայի շուրջը համախմբել։

Քաղաքական անկախութիւնը գրեթէ ջնջուած, լեզուն՝ համր, գիր ու գրականութիւն օտար—ասորի կամ յոյն. եկեղեցին՝ անունով միայն ազգային և լի հայութեան երդւեալ թշնամի յոյն ու ասորի ախտաւոր վանականներով, որոնք մրցութեան մէջ են հայ կղերի հետ տիրապետութեան, արծաթի համար ու անասելի շայտութեան անձնատուր՝ ծծում են ժողովրդի կենսական հիւթերը. երկիրը անտեսապէս ու ֆիզիկապէս հիւծուած Արշակունիների անվերջ պատերազմներից արևելքի ու արևմուտքի երկու հակառակորդ կոլոսների դէմ. տգիտութիւնը, հակառակ քրիստոնէութեան մուտքի, համատարած, բազմաթիւ սնոտիապաշտութիւններով ու աղանդներով ազգային ոգին ու նկարագիրը եղծուած. ահա հինգերորդ դարի սկզբի և չորրորդ դարի վերջի Հայաստանը։

Վերքն ահագին էր ու խորը, վտանգն անխուսափելի

ու ահաւոր։ Կրօնն ու եկեղեցին ոչ միայն անզօր էին հայի ազգային գոյութեանն սպառնացող ծանր վտանգը դիմագրաւել, այլ և իրենց խորթ, օտար ոգով, ապազգային ձգտումներով հզօրապէս օժանդակում էին քայքայման աւերածի գործին։ Ահա այն մեծ ճշմարտութիւնը, որ ըմբռնում են Սահակ ու Մեսրոպ և իրենց ցաւած հոգիների բոլոր կորովով ճգնում են ազգային ճակատագրի գահավէժ ընթացքը խափանել։

Եւ ինչ որ այս երկու խոշոր պատմական դէմքերի իրական, անկապտելի մեծութիւնն է կազմում, նրանց երազած դարմանն ու փրկութիւնը, հակառակ իրենց կրած սքեմին — կրօնական չէ, այլ զուտ աշխարհիկ — հայրենի գիր, հայրենի գրականութիւն, ժողովրդական լայն խաւերը ընդգրկող համատարած լոյս։

Ահա Սահակ-Մեսրոպի Մեծ Երազը...

Տարամերժօրէն հակոտնեայ մի ըմբռնում առհասարակ կղերական հասկացողութեան, որ բոլոր դարերում, բոլոր հորիզոնների տակ — լինի այդ Բուդդայի, Կոնֆիցիուսի, Քրիստոսի թէ Մուհամեդի փարախում — ժողովուրդների տգիտութիւնն է համարել կղերի գոյութեան անհրաժեշտ պայման և դիւրահաւան հաւատացող հոգիների խաւարը՝ տիրապետութեան զէնք։

Սահակի ու Մեսրոպի, այս անզուգական քահանայապետի ու վարդապետի մեծութիւնը այս չքնաղ, այս լուսաւոր ըմբռնումի մէջ է, որ նրանց դարձնում է հայ աշխարհի մեծագոյն բարերարներ և դնում է արևելքի ամենախոշոր դէմքերի, ամենամեծ յեղաշրջողների կողքին.

Եւ այդ յստակ, վճիտ ու ազատական մտածումը, թէ ազգի փրկութիւնը համատարած լուսաւորութեան մէջ է, թէ այդ հնարաւոր է միմիայն հայկական այբ բենի յօրինումով, թէ քաղաքականապէս փշրւող ազգը պէտք է և հնարաւոր է ամրապնդել անհիւթ, անքակտելի կառուցածքով — այս կորովի մտածումը դառնում է կիրք, կսկծալի երկունք, մի շքեղ երազ, որ խտանում է յատկապէս Մեսրոպի հոգում դիւթիչ հեռանկարով։

Այդ հեռանկարը...

Հայ գիրը քանդում է հայ ժողովրդի լեզուի կապանքները, կենդանի, խօսուն բարբառը նախ արձանանում է նոր հրաշէկ մաքերով հարուստ գրքերի մէջ և ապա ինչպէս վառ ճրագ, ինչպէս փայլատակող կայծակ ցոլքերը արձակում դէպի հայ աշխարհի ամենէն հեռաւոր, ամենէն մոռացած, ամենէն խաւար վայրերը և առաջին անգամ անհուն դարերից յետոյ, հայ մատաղ սերունդը իր խորը իմացական աչքերը կռացնում է հայատառ գրքի վրայ և հոգին փթթում է նոր, զգայացունց գաղափարներով, որոնք նրա էութիւնն են փոթիրկում և բաց են անում նրա հայեացքի առաջ աւելի լայն, աւելի լուսաւոր հորիզոններ։ Հայրենի աշխարհի վիթխարի լեռները կռացնում են սեգ թիկունքները, ինչպէս զսպած առիւծներ, տիրող ձեռքի շփումի տակ, անդնդախոր ձորերը հարթանում են, նոր, գեղեցիկ ուղիների համար և հայրենի բարբառը, հայրենի միտքը իր լուսաւոր թևերի տակ, որպէս հպարտ, գեղանի արծիւ պարփակում է հայ աշխարհը, Ատրպատականից ու Փայտակարանից մինչև Փոքր Հայք, Միջագետքից, Կորդուաց աշխարհից մինչև Գուգարք ու Տայք։ Ու այնուհետև արևելքի ու արևմուտքի ամենաթունոտ չկամութիւնները, պարսիկն իր Զէնդավեստայով, Բիւզանդիոնն իր նենգութիւններով, հիւսիսի և հարաւի բարբարոսներն ու ասիական ոռնացող խուժանները, անզօր պիտի լինին փշրելու այդ կուռ ու հմայիչ միութիւնը, որ իր փայլուն լուսապսակի մէջ պիտի պարփակի հայ ազգի հոգևոր և մտաւոր ամբողջական կեանքը, նրա անաղարտ, ինքնատիպ պատկերը։

Ահա Մեծ Երազը Մեսրոպի մեծ հոգուն արժանի, որ տքնութեան ու երկունքի մի գիշեր պիտի խտանար նրա տանջած երևակայութեան հակայ ճիգով և գերբնական լուսեղէն մատներից կաթկթէր ինչպէս կայծակի բեկորներ — այբ, բեն, գիմ....

Մեծ Երազը իրականութիւն էր և ահա նրա շուրջը սկսում է բուռն պայքար Լոյսի համար։ Մեսրոպի և նրա աշակերտներին — Թարգմանիչների չքնաղ կաճառին — է վիճակուած ներքին բոլոր խաւար ոյժերի հակամարտութեան առաջին գրոհը դիմագրաւել ժողովրդական ոգու, լուսաւորութեան մեծ գործի յաղթանակն ապահովել։ Եւ եթէ ներքին թշնամիները շուտ են տեղի տալիս ու գրեթէ կէս դարում հայ գիրը կարողանում է հայկական սքանչելի Ոսկեդարը կերտել, արտաքին վտանգները չեն սպառուում և հայ ժողովրդին, բովանդակ հայ ազգին է վիճակուում հայկական Պրոմէթէոսի լոյսը ապահովել արտաքին թշնամիներից։ Այնուհետև տասնևհինգ դար շարունակ, մինչև մեր օրերը, մինչև այսօր, հայը վարում է այդ պայքարը Լոյսի համար անկուն ու յամառ։ Մենակ, որպէս մի քաղաքակրթուած գաղութ, նեռուած ասիական բարբարոսների մէջ, հայը տասնևհինգ դար շարունակ իր ջլուտ ձեռքերով, անլուր մարտիրոսութեան գնով բարձր է պահել այն լուսարձակ կերոնը, որ Մեծ Մեսրոպը մի օր տնկեց հայկական բարձունքների վրայ։ Բիւզանդական նենգ չկամութիւնն արևմուտքից և ասիական արիւնարբու մահաշունչ խուժանները արևելքից փոխ առ փոխ փորձել են փշրել հայի լուսատենչ յամառութիւնը և մնացել են կորագլուխ։

Ազգեր են եկել կատաղի արշաւով և զարկուել ու փշուր ու փշուր խորտակուել, որպէս ծովի փրփրուն ալիքներ ու մի պահ ընկճուած հայը ոտքի է կանգնել, աւերակն՝երը վերաշինել, կեանքը վերաստեղծել ու հին պայքարն սկսել լոյսի շուրջը, լոյսի համար։

Ահա հայկական ողջ պատմութիւնը տասնևհինգ դա-

բուց ի վեր։ Լոյսի, քաղաքակրթութեան, ազատութեան համար են ընկել մեր ընտիրները, մեր լաւերը, մեր ճակատողները։ Լոյսի համար է լացել հայը իր պարտութեան ցաւագին տարիներում, նրա համար աղօթել, նրա համար հիւսել իր ամենաքնքոյշ, ամենասրտաբուղխ երգերը ու նրա յաղթանակի յոյսերին կապել իր լաւագոյն իղձերը, իր ամենավառ հաւատը։

Եւ տասնուհինգ դարերի այդ հերոսական պայքարից, անթիւ մարտերից, աւերածից, անլուր թշուառութիւններից, անգամ մեր օրերի անասելի սարսափներից յետոյ՝ հայը այսօր կանգնած է աշխարհի առաջ բաց ճակատով և իր ցեղական Լոյսի մեծ տօնն է կատարում, ապա նա կարող է և իրաւունք ունի հպարտութեամբ բացականչել՝

„Այնուամենայնիւ ես յաղթեցի“...

ՄԵԾ ՅՈԲԵԼԵԱՆԻՆ ԱՌԹԻՒ

(413—1513—1913)

Ad perpetuam rei memoriam!

Ահա մե՛նք ևս՝ մեր յոգնատանջ ու ջլապիրկ բազուկներուն մէջ սեղմած մեր մասնակցութեան համեստ այլ բոսորագեղ ծաղկեպսակը — կուգանք ընդառաջ Հայութեան այս հրաշափառ Տօնին և համատարած խանդավառութեան ու, գորովալի՛ր և հիացիկ և երախտագէտ, կը խոնարհեցնենք մեր գլուխը մեր Մտքի վեհերաններուն յիշատակին առջև, մենք՝ որ օրօրոցէ՛ն դատակնիքը ստացեր ենք մեր ճակտին՝ միայն փուչէ՛ պսակներ գրկելու, մենք որ՝ պատանի՛ միայն դագաղներո՛ւ ենք ընդառաջ գացեր և կամ՝ երիտասարդ՝ միայն շիրիմներու վրայ ենք խոնարհեր ու վարդեր սփռեր...

Եւ տեսէ՛ք մեր բիբերն ալ այսօր վճիտ են աստղերու պէս և լուսաշող—իսկ մեր շրթունքը բուստերու նման կարմիր և ժպտուն, ոչ այլևս գրգռուած մեր առհասարկան, մշանջենական տենդէն, յոյզերէն և զայրոյթէն, այլ օրուան բերկրանքովն ու փառքովը առլցուն և հպարտ։

Այսօր տօնն է հայ Միտքին, մե՛ր Միտքին, և, այո՛, որքա՜ն ալ մեր խոհերը անդառնալիօրէն գերեւած ըլլան դէպի այլ ուղիներ, որքա՜ն ալ մեր հայեացքը վշտադրոշմ գամուած ըլլան այլ հորիզոններու և մեր գրիչը մեր մատներուն մէջ ըմբոստ չյօժարի արձանագրել խանդաղատանքի խօսքեր և օրհներգութիւններ, քանի դեռ չեն երևար խինդն ու պարը Տօներու Տօնին կամ արշալոյսը այս անծայրածիր աղջամուղջին, — տեսէք, մենք այնուամենայնիւ կուգանք յաղթել այսօր մեր սուգին ու մե՛նք ևս ներկայ ենք օրուայ համայնական հանդիսաւորութեան, ներկայ ենք մե՛նք ևս և մե՛նք ևս ենք ուրախ...

Որովհետև, մենք համոզուած ենք որ մեր հայկազնեան պարթև ժողովուրդի լերկ ու թշուառ պատմութեան մատեանին այնքան հազուագիւտ լուսաւոր էջերէն մէկն է Հինգերորդ Դարը — իսկ մեր սեփական Տառը, ի՞նչ տարակոյս, մեր ազգային-հայրենի ժառանգութեան ամենէն թանկարժէք և գուրգուրալի գոհարը։

Յետոյ, մենք ուրախ ենք նաև այս Տօնախմբութեամբ, որովհետև Լեզուն ամենազօրեղ օժանդակն է Բանականութեան և Գրիչը ամենէն անկրկելի ու հաւատարիմ զինակիցը Բազուկին։

Զէ՞ որ գրեցի՛ն գրեցի՛ն ու գրեցի՛ն մեր նախորդները դարեր ամբողջ, անդադրում, մինչև որ նախիրներու պէս անգիտակից և սողուններու պէս գետնաքարշ ինկած հեղգ սերունդները սովրեցան վերջապէս կանգնիլ ուղղաձիգ, և Իրաւունքին հասկացողութեամբը գօտեպինդ՝ վանեցին Ընդհարումին ու Դատաստանին սարսափը։ Զէ՞ որ դեռ հիմա կը գրենք մենք ամեն օր, կը գրենք ի խնդիր ցնցումի և ընդվզումի, կը գրենք ի խնդիր սիրոյ և անձնանուիրութեան, կը գրենք ի խընդիր ազատութեան, սիրոյ, լոյսի և եղբայրութեան։

Ահա՛ թէ ինչու և ինչպէ՛ս մենք եկեր ենք մասնակցիլ այս Տօնին։—ճիշտ է, վաղը դալ ձեալ մեր ճակատները պիտի դալկանան ու խորշոմին, մեր թանաքը դարձեալ պիտի ըլլայ թունաբոյր և մեր աչքերը՝ կարմիր—շրթունքը՝ տժգոյն, մահու թախիծով պիտի պարուրի մեր հոգին — ճիշտ է որ մենք վաղը դարձեալ պիտի տարուինք մե՛ր սերունդին վիճակուած հոգերով, առևանգուող մեր քոյրով կամ ուրիշին համար հիւանդ հիւծող մեր ընկերով, ու ցաւի ու պայքարի ճանապարհին վրայ ծնունդ առած հարկաւ մենք պիտի շիջինք արտասուքի ու արեան շաւիղներուն մէջ, բայց փո՛ղթ չէ, յամենայն դէպս այսօր ներկայ ենք ահաւասիկ այս Տօնին, Բնաշխարհի անթառամ կակաչներէն հիւսուած արիւնաթոյր մեր պսակով։—Տեսէ՛ք անոր սպիտակ ծոպերուն վրայ մեր անունը. —„Յեղափոխական Երիտասարդութիւն“...

Բ. ՇԱՀՊԱԶ

Ո՞ՒՐ Է ՀԱՅԱՍՏԱՆԸ

Մի՛ ժպտա, ու ներիր ինձ միամտութիւնս, ո՞վ բարեմիտ ընթերցող, որ հայկական հարցի այս յուզումնալից ճգնաժամին՝ երբ հայ ու Հայաստան յեղյեղում են աշխարհի բոլոր լեզուներով, երբ կարմիր Եղեռնի անանց մղձաւանջի տակից բիւրաւոր աչքերի մէջ փրկութեան հեռաւոր ձայնն է թարթում տարտամօրէն, ես՝ խոնարհ ու երազող Տարագիրս, հարցնեմ, թէ ո՞ւր է Հայաստանը։

Մի՛ ժպտա և մանաւանդ մի՛ անիծիր ինձ այս տարադէպ և գրեթէ անողորմ հարցիս համար, մի կնճռիր ճակատդ և հայրենի աշխարհին նախանձախնդիր ըմբոստութիւնդ մեղմիր մի վայրկեան, որովհետև իմ հարցի իւրաքանչիւր խօսքը իմ իսկ շրթունքներս է այրում և իւրաքանչիւր տառը սուր թունաւոր փշի պէս ի՛մ իսկ հոգուս մէջ է տնկուած։

Վտարանդի ու ցաւագին մենութեանս մէջ ես յաճախ եմ փնտրել Հայաստանը, իրական, հպարտ, գեղեցիկ Հայաստանը և ամեն անգամ հոգիս բունաւեր, սգաւոր թռչունի պէս էութեանս գաղտնախորհուրդ խորշերում մեղմիւ լացել է իր վշտի ու ցասումի արցունքները, որովհետև... է՛հ, ի՞նչ ասեմ, իմ երազած, իմ փնտրած Հայաստանը չեմ գտել։

Ի զո՞ւր, ի զուր եմ փորձել երևակայութեանս մի հզօր թափով դուրս քաշել հեռաւոր մշուշի ծոցից այն հովիտներն ու բարձունքները, ուր հայ բարբառն է լսւում, ուր հայ գեղջուկը, առանց երգի, առանց հայկական սքանչելի „հօրովէլի“ համբուրէն ու գրեթէ անյոյս ակօսն է քաշում ու սերմը ձգում. այն խրճիթները, ուր՝ մի հին օրօրոց է օրօրւում ու մի մանուկ է հանգչում մուշ-մուշ — շքեղ կոկոնը յուսացող ցեղի, ուր պառաւ մայրը — տառապող ազգի անշէջ կրակի, հայկական անբիծ օճախի այս սուրբ վեստալկան մեղմիւ դարձնում է մի հին, լալկան ճախարակ. ո՞ւր մատաղ, թրթռուն հարսները, որպէս պարարտ մարգագետին, իրենց հարուստ կողերի տակ կրում են ցեղի երազուն հոգին։

Ի զուր եմ փորձել այդ վայրերի արևից հոգուս ցրտութիւնն սփոփող ցոլքեր մուրալ ու հպարտօրէն բացականչել՝ „ահա՛ Հայաստա՞նը“...

Եւ այդ սրտապարար, այդ կորովի բացականչութիւնը միշտ սառել է շրթունքներիս, քանի որ իր յուռթի ակօսի մէջ գեղջուկն է խոզխոզւել, օրօրոցի մէջ՝ մատղաշ մանուկը, գեղանի հարսը տարւել է, որպէս բարբարոսների պագշութեան անզօր ոչ տրտում զոհ, և պառաւ մայրը մոխիրների վրայ նստած և չորացած ստինքները երկնքի դէմ յանդիման, որպէս քարացած զարհուրանք՝ իր հայեացքի սարսափը մխրճել է օրիզոնի մութ ամպերի մէջ։

Ո՛չ, Հայաստանը չէ այս, այլ տանջանքի, կիզիչ կսկիծի, անքուն տառապանքի վիթխարի հովիտը։

Ո՞ւր է Հայաստանը...

***

Զիսօսենք հայ քաղաքակրթութիւնից, որ որչափ և իրական լինի ու շքեղ, բարբարոսների ձիերի սմբակների տակ հազար տարիներ փշրւել է ու փոշիացել և մեր հայրենի աւերակների մէջ այսօր քրդական „ղլօշն“ է լսւում որպէս նահատակի արիւնաթաթաւ ու մոռացուած դիակի շուրջը ոռնոցը գիշակերների։

Պատմութիւն ունինք՝ ողջ հեծկլտանք ու ողբ, ուրոյն, ինքնատիպ եկեղեցի, որի կամարների տակ դարեր շարունակ հնչւում է մեջքակոտոր, ճիչւած ցեղի անյուսութեան ամօթալի աղաղակը՝ „Տէ՛ր ողորմեա“..., ժողովրդական երգ ու տաղ, խաղ ու պար, ուր կեանքի ու սիրոյ, խինդ ու յոյզի թևերն են փետուած այն խոհուն, անանց թախիծով, որ հանգչում է հայ մատաղ սրտերում, որպէս օձը վարդենու տակ. ծով գալարուն բանաստեղծութիւն՝ ցաւը երգելու, գիր ու գրականութիւն, հազար չորս հարիւր տարի առաջ լուսաշող ոսկեդարով պսակւած, այնուհետև դարեր շարունակ մեր կեանքի անապատներում խորշակահար շորանալու համար։

Պատմական անլուր տառապանքները, որոնք անցել են ծունկի եկած ազգի թիկունքով, որպէս ուղտերի յամբաշարժ ծանր կարաւան և նոր աւելի ահաւոր սարսափները, որ մենք ապրեցինք դեռ երէկ և ապրում ենք այսօր, կարծրացած սրտերի, անասնացած մարդկութեան այս զզւելի ժամանակներում, մանուկներին վախեցնելու հէքիաթների տեղ ծառայեցին ու անցան։ Զարտնչանք, համբ ցաւերն ու հնազանդ ստրկութիւնը, անմտօրէն թափած արիւնն ու անասունի համբերութեամբ կրած մեծագոյն սարսափները հայրենիք ստեղծել չեն կարող։

Ոչինչ աւելի տաղտկալի ու վանող, քան ցսւի անվերջ յանկերգը, ոչինչ աւելի ստորացուցիչ, անարժանիք, քան աղօթք ու պաղատանքի կեցուածքը։ Այս նզովւած աշխարհում իրաւունքներից վատթարն ու տարամերժօրէն անյոյսը արցունքի, թուլութեան, անզօր խեղճութեան վրայ հաստատուած իրաւունքն է... ու հազար տարի մենք լալիս ենք։

Ա՜հ, եղկելի ժողովուրդ...

Եւ ի՞նչպէս չհարցնեմ վերստին սրտի անհնարին կսկիծով թէ „ո՞ւր է Հայաստանը“..

***

„Հայաստա՞նը, կը պատասխանի թիւրքը — նիհ թէ նոր — Հայաստանը եղել է, բայց էլ չկայ, կան միայն արևելեան Անատօլուի նահանգներ, կամ. Քիւրդիստան, ուր քրդական հոծ ազգաբնակութեան հետ ապրում են նաև սակաւաթիւ հայեր, անհանգիստ, յաւերժապէս դժգոհ մնացորդներ մի կորած ցեղի, որ ո՛չ քաղաքակրթութիւն է թողել և ո՛չ յիշատակարաններ և պարզիտի պէս ապրել է օտարների, մանաւանդ քրդական քաղաքակրթութեան փշրանքներով“։ Եւ նրա մանր, մանկօրէն նենգամիտ աչքերի մէջ կը փայլի ինքնաբաւական ժպիտը այս ապիկար ու խղճուկ յայտնութեամբ՝ թէ Հայաստան չկայ։

Արևմուտքի բոլոր ընչաքաղց գիշեկերների, բոլոր արկածախնդիր ու ախտաւոր փարիսեցիների համար Հայաստանը մի աշխարհագրական անուն է, հինաւուրց շիրիմների մի աշխարհ, որ դրամագլուխը պիտի կեանքի կոչի, նոր, հզօր, կենսալի ժողովուրդների համար, ուր պիտի թաւալի քաղաքակրթութեան երկաթէ անիւը, փշրելով ու տրորելով փոքրաթիւ բնիկներին, որոնք թէև վիրաւոր և արիւնաքամ, բայց շարունակում են պայքարել մի լաւ, մի նոր արշալոյսի յոյսերով։

Եւրոպական նենգ գիւանագէտների համար Հայաստանը թիւրք բռնապետութեան կարմիր խելագարութիւնն է իրենց ներշնչումներով հրահրուած, իրենց ժպիտներով քաջալերուած, արիւնազանգ ու դաշոյններով փողոտուած մի պատան, որ ինչպէս սպառնական դրօշ փողփողում են Բոսֆորի կապոյտ ջրերի վրայ, երբ պէտք է ապիկար ու բթամիտ թիւրքի գրպանը խարտել։ Վերջանում է կողոպուտը, կնքւում է առևտուրը, դժբախտ ու աւեր երկրի մի նոր պատառն էլ շորթւում է, Հայաստանի արիւնոտ ստւերը վերստին ծածկւում է գերեզմանում և քաղաքակիրթ գիշատիչները կամացուկ փսփսում են ողորմելի թիւրքի ականջին։

„Անհոգ կա՛ց, Հայաստան չկայ“։

— Էվէ՛թ, էֆէնդիմ, լինում է պատասխանը։

Քեզ համար, իմ ազնիւ ընթերցող, ինչպէս և հայութեան մեծամասնութեան համար Հայաստանը երևի „հայկական վեց նահանգներն“ են, որոնց անունով մենք ամենազարհուրելի սարսափներն ապրեցինք՝ միայն գերեզմանի փոշին մեր գլխներին ցանելու համար, ամենավառ յոյսերը օրօրեցինք ամենագաժան հիասթափութեան համար։

Անողո՞րմ, արիւնոտ պատրանք, որի շուրջը երեսուն տարուց ի վեր դառնում են դիւանագիտական նենգ խաղերը, մութ, ոճրագործ դաւերը։ Ու երբեմն ժպտում են մեր անճարութեան մի ժպտով, որից զգուշաւոր, խոհական մարդու հոգին կը սարսռար, իսկ մենք — յաւերժական դիւրահաւաններ — թողնում ենք, որ այդ դիւական ժպիտը օձի պէս մեր հոգու մէջ սողայ, մեր ջարդուած հաւատին նոր յենարան դառնայ ու նորից մրմնջում ենք՝ „գուցէ հեռու չէ Հայաստանը“։

***

Նզովուած, եղերական պատրանք, որ իմ էլ հոգին բզկտեց յուսախաբութեան սուր ճիրաններով, թոյնի կաթիլներով իջաւ, իջաւ էութեանս խորշերը և ամենէն վճիտ երազներս աւրեց, ամենէն հպարտ ու նուիրական իղձերիս վրայ թառեց որպէս թանձրամած խաւար։ Ու այս ցաւագին ու վտարանդի մենութեանս մէջ շատ եմ խոկացել, շատ եմ փնտրել մանուկ օրերիս երազած հպարտ, շքեղ Հայաստանը։ Եւ թողէ՛ք, որ ասեմ, այժմ, ո՛վ հոգուս ու ցաւիս եղբայրներ, որ Հայաստանն ինձ համար այսուհետև ո՛չ աճիւններով լի հինաւուրց սափորներն են, որքափ և մեծ լինին մեռելները, այլ յարատև ողբն ու կսկիծը, ո՛չ աշխարհի հզօրների շրթունքներից մեր մուրացած ժպիտները. ո՛չ կարեկցութիւնը մի հիւանդ քաղաքակրթութեամբ սնուած մարդկութեան։

Ո՛չ, ո՛չ... ու դարձեալ ոչ։

Իմ երազած Հայաստանը այժմ մաս-մաս կերտւում է ինչպէս բոյնը ծիծեռնակի, ինչպէս խոտերի տակ թագնուած փոքրիկ ջրերից կազմւող փրփրուն վտակը, ինչպէս վաղորդեան գունատ ցոլքերից մեղմօրէն վառւող վիթխարի հրդեհն արշալոյսի, որ ողողում է տիեզերքը լոյսի ու ջերմութեան ծովով. կերտւում, բարձրանում է այդ Հայաստանը մոխիրների ու աճիւնների վրայ, թմրած ու մեղկ հոգիները տրորելով, այն ձոր ու դաշտերում, ուր դարեր միայն ողբերն են արձագանքել, այն խրճիթների տակ, ուր սարսափն ու մահն է թագաւորել ինքնիշխան, ամենակարող, աւերիչ։

Ա՜հ, թողէք որ երկիւղածութեամբ ծունկի գամ ձեր առաջ, ո՛վ անանուն, անյայտ, սքանչելի վարպետներ, դուք որ ձեր հոգու ատաղձով, ձեր ստեղծագործիչ շնչով, ձեր առաքինի բազուկներով, ձեր ժպիտներով, կորովով ու արիւնով լուռ ու յամառ ինչպէս մայր բնութիւնը, կերտում էք իմ երազած շքեղ Հայաստանը։ Աշխարհի ծափերից ու փառքից հեռու, շուք ու վայելքի հանդէպ ըմբոստ, բազմաթիւ անուններով, բայց առանց անուն, ինչպէս բնութեան շունչը սիրահար, բաց ճակատներդ ու լայն կրծքերդ աշխարհի չորս հովերին տուած, երեսներդ արևառ, կրունկներդ մաշուած, հոգիներդ արևով լի և աչքերիդ մէջ կայծը երկնային, անցնում էք գիւղից՝ գիւղ, ձորից՝ ձոր, սարից՝ սար, դաժան, մթին առապարներով փէրիշան աւեր ցեղի բոյնը կերտելով։

Եւ այնտեղ, ուր դուք ոտք էք կոխում, ես գիտեմ, հայ գեղջուկը „հօրօվէլով“ ու յոյսով ձգում է սերմն ու քրտինքը լայն ակօսի մէջ, խրճիթում օրօրոցն է օրօրւում և մանուկը — շքեղ կոկոնը յուսացող ցեղի — հանգչում է մուշ-մուշ, մատաղ հարսը էլ չի դողում իր գեղանի կանացիութեան, իր անբիծ պտուղի համար և պառաւ մայրը մեղմիւ դարձնում է հինաւուրց ճախարակը՝ առանց լացի, առանց երկիւղի։

Ա՜հ, թողէք, որ երկիւղածութեամբ ծունկի գամ ձեր առաջ, ո՛վ անանուն, անյայտ, սքանչելի վարպետներ... չէ՞ որ ձեր կոխած տեղում Հայաստանն է բարձրանում փարթամ ծիլերով, իմ երազած, իմ փնտրուած շքեղ Հայաստանը։

ՏԱՐԱԳԻՐ

„ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԸ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԻՐԱՔԵԱՆ

(1878—1908)

Երբեմն մարդիկ յաւերժանում են սերունդների յիշողութեան մէջ, շնորհիւ աւելի իրենց մահուան ձևին, քան կատարած գործերին։ Եւ որքա՜ն դժբախտ են նրանք, որոնց մահը չի համապատասխանում իրենց կեանքին ու գործին... Հասկանալի է, որ բոլոր ուժեղ յեղափոխական դէմքերը սարսափում են խաղաղ, հիւանդ, անկողնում մահանալու հեռապատկերից...

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԻՐԱՔԵԱՆ

Այդ կարգին է պատկանում մեր Յարութիւնը։ Նա մեռաւ Վանում լեղիի հիւանդութիւնից և բժիշկների անկարողութեան պատճառով։ Մի մարդ, որ բազմաթիւ անգամներ խաղացել էր մահուան հետ, կուի դաշտում և ազատուել ամենավտանգաւոր պատահարներից, ընկաւ մի այդպիսի մահով...

Նա բնիկ Մշոյ Գէնջ գաւառակի Օղնուտ գիւղէն էր, նահապետական ընտանիքի զաւակ։ Իր սկզբնական կրթութիւնը ստացել է „Միացեալի“ իրենց գիւղի 4-ամեայ վարժարանում, ուր յայտնի է եղել իբրև ժիր և ընդունակ աշակերտ։

Մեծ կոտորածներին վերջ, երբ երկիրը անտեսապէս սնանկացաւ և սկսուեց գաղթի ու պանդխտութեան հոսանքը, Յարութիւնն էլ շատերի հետ Պոլիս անցաւ, ապա Բուլգարիա, ուր գործարանների մէջ կ'աշխատէր՝ աղքատ ու սնանկացած ընտանիքին օգնութեան հասնելու հոգեր։

Արտասահմանում նա շփուում է յեղափոխական կուսակցութիւնների հետ և 1900 թ. մտնում է Դաշնակցութեան մէջ։

Այնուհետև նա փոխադրուում է Ամերիկայ։ Պրովիդենսի կուսակցական կեանքի կենտրոնական անձնաւորութիւններից մէկն է դառնում և մասնաւորապէս հոգում է իր ինքնազարգացման մասին։ Թիւրքահայաստանում և Կովկասում ծայր աւող հոսանքների ալիքը հասնում է Ամերիկայ։ Սկսուում էին Սասնոյ ապստամբութեան նախապատրաստութիւնները և Թումանի, Մուրադի, Սեպուհի, Քեռիի խումբերը աջողութեամբ Սասուն են հասնում։

Յարութիւնը չի կարողանում տանել ամերիկեան հանգիստ կեանքը։ Սահմանագլխում հնչող ռազմերգերը կուի կը հրաւիրէին ցրուած ընկերները... „Մեր բաղ ընկերներ մեզի կըսպասեն“... Յանկանալով երկրում աւելի օգտակար լինել, նա մտնում է իբր կամաւոր ամերիկեան բանակը, սովորում է զինամարժութիւն, որպէս զի երկրի մէջ կարողանայ տեղին վրայ սորվեցնել նոյն արհեստը ժողովրդին։ Եւ 1903-ի աշնան մի քանի այլ ընկերների հետ ճանապարհուում են Կովկաս, այցելելով նախ Ժ. Ը. Ն. Է. կուսակցութեան արտասահմանեան ուխտատեղին... „Ոչ ոքի չէինք ճանչնար, մեզի հանդիպեց մէկ ծերունի ու կաղ մարդ, շատ հմտեստ հագնուած, կը կարծէինք, թէ ծառայողներէն մէկն է. մեզի հետ շատ անուշ կը վարուէր, մեզի ճաշարան տարաւ, կերցուց ու թոյլ չէր տար, որ մենք վճարենք։ Ըսինք՝ ապօ (հայրիկ) մենք Ամերիկայէն դրամ շատ ենք բերած, ինչո՞ւ չես թողներ, որ մենք վճարենք... Քօռնանք մենք, չէինք գիտեր, յետոյ իմացանք, որ Քրիստափորն է եղել և տղայի պէս մեզի կը ծառայէ եղեր... Ափսո՜ս, ալ չտեսանք... բայց անոր հմբոյրը դեռ թարմ է մեր ճակտին։ Մեռնենք ալ հոգ չէ, Քրիստափորը տեսանք... Կը շտապէինք երկիր՝ Անդրանիկն ալ տեսնելու“...

Ահա այն տպաւորութիւնը, որ նա և ընկերները ստացել էին Ժրնէվէն։

Ընկերներով կարս են — յեղափոխականների ժամադրավայրը։ Սասունն արդէն պարզել էր ապստամբութեան դրօշը։ Կուռղները իջել էին Դաշտ։ Խմբով Սասուն հասնել անկարելի էր. Խանի և Նեմրուզի խմբերի օրինակը կենդանի է, սահմանագլուխները լեցուած էին զօրքերով։

Արևելեան Թիւրքն և երկրի գործով զբաղուող Մարմինները, յենուած III Ընդհ. Ժողովի որոշումների վրայ, վճռում են կազմակերպել արշաւախմբեր։ Արդէն յայտնի են Երևանի գծով գնացած երկու խմբերի և Օլթիի խմբի դժբախտ պատմութիւնները։ Այդ ժամանակ կազմակերպուած էր և մի ռմբային ցոյց սահմանագլխի պահականոցներից մէկի դէմ, ընկեր Ցուրբախի ղեկավարութեամբ։ Ահա այդ վերջին խմբի մէջ է մտնում

և Ցարութիւնը, որ արդէն Բուլգարիայում և Կովկասում մարզւել էր ռմբային գործողութիւնների մէջ։

Մի սոսկալի, անձրևային գիշեր՝ խումբը մօտենում է սահմանին։ Պէտք էր այն աստիճան մօտենալ պահակին, որ հնարաւոր լինէր ձեռքով ռումբ նետել։ Հսկողները նկատում են մերոնց և սկսւում է կրակը երկու կողմից։ Մերոնք յետ են նահանջում։ Շարժումները վերջանում են երկրի ներսը և դուրսը, առանց սպասած արդիւնքը տալու։ Ներսի զինւորական ոյժերի մեծ մասը ստիպւում է արտասահման անցնել ռազմական պաշարի պակասութիւնից և կառավարական խստութիւններից ստիպւած... Դայր են տալիս լքման նշաններ։ Հարկ էր գործը նորէն սկսել. հարկ էր գտնել նոր ու թարմ մարդիկ, որ գնային մրջիւնային աշխատանքով նոր գործ սարքելու, քայքայւած վայրերը վերակազմակերպէին։ Այս անգամ շարժման ծանրութեան կէտը փոխադրւում է Վան։ Մի վայր, ուր համեմատաբար խաղաղ է մնացել և ուր կարելի է սիստեմատիկ աշխատանք սկսել։

Եւ ահա Ցարութիւնը ուրիշ 3 ընկերների հետ անցնում է Պարսկաստան, Վան երթալու համար։ Ճանապարհւում են՝ հազար ու մի նեղութիւններով, ռուսական սահմանից մինչև Վան մօտ 20 օրւայ ճամբայ ոտով գնալու պայմանով։

Նա կարճ ժամանակամիջոցում Վանի մէջ ստեղծում է իրեն համար մի բացառիկ դիրք։ Մի քանի այցելութիւններ այս և այն գիւղում արդէն բնորոշում են նրա կարողութիւնները։

Գաւառները հիմնւած էին կոմիտէներ և ամեն կոմիտէական շրջանում կար մի շրջիկ ընկեր, զինւորական խմբով։

Ցարութիւն նախ տեսակցեց փորձւած ընկերների հետ, ապա ինքը մենակ սկսեց կառավարել մի ամբողջ շրջան։ Եւ մի տարի չ՛անցած, նա արդէն ժողովրդական գործիչ էր։

Ի՞նչ էր նրա այդ ժողովրդականութեան գաղտնիքը։ Անուշ ու համեստ բնաւորութիւնը, անկեղծ ժողովրդասիրութիւնը ու բուռն եռանդը։ Նա իսկական ժողովրդի մարդ էր. ժողովրդական էր մանաւանդիր քարտ զէական տաղանդով, նա ժողովրդի հետ խօսել գիտէր իր լեզուով, ժողովրդի բարբառով, համեմւած օրինակներով և շատ անգամ քրդերէն բառերով։ Ամերիկայի վիճաբանական ժողովները և իր բնածին խօսելու կարողութիւնը նրան դարձրին ժողովրդական տրիբուն... Եւ շատ անգամ իրմէն բարձր կրթութիւն ստացածները, երբ կը խօսէին գիւղում, ժողովուրդը կը խնդրէր, որ „պարոնի խօսածները Ցարութիւնը թարգմանէ իրենց“։

Արճակի շրջանը, որ իրմէն առաջ համարեա անկազմակերպ էր, մի տարւայ ընթացքում 32 գիւղ կազմակերպւեցին, այն էլ ո՛չ թէ սոսկ անունով, այլ և իրական ռազմական ոյժով... Գիւղ չկար, որ առնւազը մի տասնեակ շունենար զինւած, իսկ մեծ գիւղերը մինչև 4—5-ը ունէին։

Նրա ամենամեծ և անմոռանալի գործն եղաւ՝ զինւորական խմբերի պատրաստութիւնը։ Վարդանից յետոյ, Ցարութիւնը առաջինն է եղել, որ լայն չափով զինւորական խմբեր է ստեղծել քաղաքում և գաւառում։ Եւ նրա զինավարժ աշակերտները այսօր իսկ հարիւրներով կարելի է հաշւել քաղաքում և գիւղերում։ Դա ոչ միայն թէորիական վարժութիւն էր սենեակի մէջ, այլ և գործնական։ Ամեռը սենեակի մէջ նա թէորիկ դասեր կը տար, իսկ ամառը լեռան կատարներին կը սորվեցնէր նշանաձգութիւն, յարձակում, պաշտպանութիւն, դիրք նստել և այլն։ Դա հանդիսացել է նոյնպէս Վանի շրջանի լաւ զինւորական խմբապետներից մէկը։ Թողնենք այն մանր-մունր ընդհարումները, որ նա ունեցել է գաւառներում՝ գիշերային փոխադրութեան ժամանակ, նրա կռիւներից ամենանշանաւորը Վարագի յայտնի ընդհարումն էր, 1907 թ. յունիս 16-ին։

Խումբը մէկ շաբաթէ ի վեր կը գտնւէր Վերին Վարագի բարձունքները, մի վայր, ուր կառավարական պաշտօնական ոտք չէր կոխել և ուր ապաստանել էին Պետօն ու Մարտիկը մեծ կոտորածներէն վերջը։ Դա Ցարութիւնի սիրած վայրն էր. կայ այդտեղ մի աւերակ եկեղեցի։ Շրջանի երկար ու դժւարին պատոյտներից յետոյ, խումբը հոդ հանգիստ կառնէր մի քանի օրով նորէն գաւառ իջնելու համար։ Ալի բէյի հալածանքների օրերն էին. քաղաքը այնքան էլ յարմար չէր երթևեկութեան համար...

Կռւի նախընթաց օրը Ցարութիւնը լսում է, որ իր սիրած ընկերներէն մէկը այդ օրը արտասահմանէն եկել է և քաղաք կը մտնի՝ Վիէննայի ժողովի լուրերով։ Նա անմիջապէս մարդ է ղրկում, խնդրելով որ նախ ընկերը իրեն այցելէ, որովհետև խումբը քաղաք մտնելու դիւրութիւն և ժամանակ չունի։ Ընկերը գիջում է և նոյն գիշեր լեռան ստորոտում գտնւող Ս. Գրիգոր վանքում, նոր եկող ընկերը ու Ցարութիւնի խումբը կը գիշերեն. խմբի մի մասը լեռը կը մնայ զգուշութեան և եղած ապրանքների հսկողութեան համար։ Միւս օրը, երբ առաւօտեան վանքը եղած խումբը լեռ կը քաշւէր, կը լսւին հրացանի ձայներ. քիչ աւելի վեր երթալուց յետոյ, կը պարզւի, որ խումբը մատնւել է և շրջապատւած է ոստիկանների շղթայով։

Մատնութիւնը կը կատարւի նախընթաց օրը, նոյն գիշեր Ժանդարմերիայի յայտնի հարիւրապետ Շիւբրի բէյի առաջնորդութեամբ, 200 ոստիկաններ կը մեկնին դէպի լեռ, որ քաղաքէն ընդամեն 2—3 ժամ է։ Արևը դեռ չծագած՝ ոստիկանները կը հասնին խմբի վայրը, բայց ոչ ոք չէր համարձակւի մօտենալ։

Արևը ծագելուն պէս, մեր ընկեր պահապանը ապա-

հովուած, որ լուսացել է և այլ ևս վտանգ չկայ, 3 քնած ընկերները թողնելով աւերակ եկեղեցու մէջ, ինքը կերթայ վարի կողմերը՝ եկող խումբին դիմաւորելու։

Շուքրի բէյը տեսնելով, որ ոստիկաններից ոչ ոք չի համարձակւում մօտենալ աւերակ եկեղեցուն, ինքը եափունջին ուսերին կամաց-կամաց կը մօտենայ եկեղեցու պատերին, կելնէ պատի վրայ և հրացանը կուղղէ վարը քնած զինուորների դէմ։ Վարի զինուորներէն մէկը յանկարծ կարթնանայ և գիրկը բռնած ու փամփուշտը մէջը պատրաստ հրացանը արագութեամբ կը կրակէ Շիւքրի վրայ, որ տեղն ու տեղը կըսպանի։ Կրակի ձայնից ոստիկանները ուշքի են գալիս և սկսում են իրենք էլ կրակել ու մօտենալ։ Այդ ժամանակ աւերակի մէջ եղած 3 զինուորները դուրս թռչելով, դիրք կը բռնեն և կըսկսին կռիւը։ Ճիշտ այդ ժամանակ Յարութիւնը խմբով հասնում է վարէն. ոստիկանները, որ շրջապատել էին խումբը 3 կողմից և կը գանուէին վերի և վարի խմբի միջև, իրենց կրակը կուղղեն շեշտակի դէպի վարէն եկող Յարութիւնի խումբը։ Յարութիւնն իսկոյն խումբը երկու մասի բաժանելով, մի մասը կուղարկէ ետևից մեր խմբէն վեր բարձրանալու և վերի դիրքերը բռնել տալու համար, իսկ ինքը մի քանի ընկերներով Մուսս, Պետրոս և այլն, կը նետուի ուղղակի կռուի ամենատաք կենտրոնը։ Պաշարուած ընկերները կրիտիկական վիճակի մէջ էին։ Շիւքրին սպանող ընկերոջ հրացանը աւերւում է, ոստիկանները նոր օգնական գնդեր են ունենում։ Յարութիւնը պատելով շղթան, հասնում է անվնաս ընկերների մօտ։ Իսկոյն շտկում է աւերուած հրացանը և սկսում են կանոնաւոր կռիւը։ Խմբի միւս մասն էլ հասնում է լեռան գագաթը և հնչում է ծանօթ ռազմերգը. „Կուեցէք տղերք, կուեցէք քաջ քաջ“...

Քաղաքից հասնում է հազարէն աւելի զօրք, բայց մերոնք լեռան լաւ դիրքերը գրաւած լինելով, զօրքը չի կարողանում լեռ ելնել. ոստիկաններն էլ տեսնելով Շիւքրիի դիակը, յետ են փախչում և կռւում են հեռուից։

Լեռան լանջը գտնուող գիւղերի կամաւորները երկու կէսից օգնութեան են հասնում. կռիւը տևում է մինչև կէսօր, երբ յանկարծ սկսւում է խիստ կարկուտ ու ձիւն, ապա թանձր մառախուղը։ Սարալանջերում և ձորերի մէջ տիրում է խորին լռութիւն. մերոնք կամաց-կամաց վեր են քաշւում։ Յետոյ իմանում են, որ զօրքը քաշւել է վանքերը—Վարագ և Ս. Գրիգոր կողոպտելու նպատակով։

Յարութիւնը առնում է խումբը, որ մինչև ոսկորները թրջած էր ու յոգնած և ամբողջ օրը ոչինչ չէր կերել—քաշւում է գիմացի մի այլ լեռ, ապա անցնում է գաւառ։ Մերոնցից սպանւում՝ է մի անզէն գիւղացի երիտասարդ, որ պատահմամբ հոն գտնուած էր։

Լեռան շուրջը հայ գիւղերը բերկրանքի մէջ են. նախ որ խումբը ազատւել էր մեծ վտանգից և ապա՝ սպանել էր Շիւքրի բէյ, որ սարսափ էր տարածել շրջանի մէջ։ Այնուհետև քիւրդերն ևս սկսեցին երգել Յարութիւնին։

Սակայն բոլոր այդ աջողութիւններն ու ներբողները ոևէ ազդեցութիւն չեն անում համակրելի խմբապետի վրայ։ Նա մնում է նորէն նոյն համեստ, նոյն ընկերասէր Յարութիւնը։ Իր զինուորների հետ վարւում էր, իբրև հաւասար ընկերների և ամենքը նրան պաշտելու չափ սիրում էին։

Գիւղերի մէջ բացի կազմակերպական-ռազմական գործերից, Յարութիւն մեծ զարկ է տուել և կրթական գործին։ Համարեա ամեն տեղ դպրոցներ է հիմնել տուել, քաղաքից երիտասարդ ուսուցիչներ տարել ու տեղաւորել։ Ուսուցիչների վարկը ապահովելու համար, գիւղերում համայնական միջոցներով ցանել է տուել արտեր և դրանց արդիւնքը յատկացրել դպրոցին։

Այսպէս նա գործում է անդուլ անդադրում—3 տարի, մինչև որ յոգնած ու ուժասպառ, ընկերների խորհրդով անցնում է Կովկաս մի տարով հանգստանալու։ Նրա հետ է լինում և Վարդան Շահպազը։ Կովկասի ամենալքած ժամանակն էր. մեր կարևոր ընկերներից մէկը պատմում էր, որ Յարութիւնի և Վարդանի Կովկաս անցնելը և մեր շրջաններում երևալը և նրանց լոկ ներկայութիւնը ու թարմ ոգին ահագին ոգևորութիւն է առաջ բերել զեկավարող շրջանակներում։

Վանի մէջ մառնութիւնը պայթում է. Յարութիւնը Դուռ Դաւիթի (որ իր սիրելի ընկերն էր) և Վարդան Շահպազի հետ սահմանագլխում խումբ են պատրաստում՝ ներս մտնելու։ Սահմանադրութիւնը վրայ հասնելով, երեքը միասին անցան Վան։

Այնուհետև մի երկու ամիս հազիւ մնալով ոտքի վրայ և մասնակցելով օսման. առաջին պարլամենտի ընտրողական պայքարին, հիւանդանում է և անկողին ընկնում։ Մի քանի ամսից յետոյ՝ մեռնում է։

Ձիւն ձմեռ էր, Վասպուրականի ձմեռը։ Մահուան բօթը հեռագրեցինք շրջանները։ Սակայն չէինք սպասեր, թէ մարդ կարող էր գալ այդ ձիւն ձմեռը, այն էլ երկու օրուայ ընթացքում։

Վանը չէր տեսել այնպիսի թաղում։ 10—15,000 ժողովուրդ, մեծ մասամբ գիւղացի, անցնում էր դագաղի ետևից, Վանի լայն փողոցներով։ Զինուորները ահագին շղթայ էին կապել դագաղի շուրջը։ Հետևում էին ներկայացուցիչներ՝ կառավարութիւնից, զինուորականներից, հիւպատոսներից, միսիոնարներից, վաճառականներից ևն։

Հանդէսը կանգ է առնում Արարուց եկեղեցու գերեզմանատանը, արտասանւում են դամբանականներ։ Ապա Վազգէնի և միւս նահատակների քով՝ հողին ենք յանձնում ժողովրդի սիրելին։ Ժողովուրդը երկար ժամանակ չէր հեռանում գերեզմանից։

Դառնորէն ողբացինք մեր սիրելի ընկերոջը, որ նա մեռաւ այնքան վաղաժամ և այնքան սովորական մահով։ Ողբացինք և երդուեցինք գերեզմանի վրայ, որ իր դրօշակը պիտի շարունակենք բարձր պահել ապրողներս։

Ընկերնե՛ր, չմոռանանք այդ ուխտը։

ԱՐԱՄ

ՊԱՏՄԱԿԱՆ

XV

ՎԻԺՈՒՄԸ

—

Զո՜ւր, միամիտ ինքնամոռակում...

Երբ այնքան վառ յոյսերից ու ակնկալութիւններից յետոյ, յաղթական „Մօսկովը“ հրամեցնում էր թիւրքահայերին — Հայաստանի ինքնավարութեան տեղ — Սան-Ստեֆանօի լղարիկ ու տարտամ յօդուածը, մեր հայրենակիցներից շատերը վերագրում էին այդ ֆիասկոն հայկական քաղաքականութեան վրիպումներին։ Եւ երբ բերլինեան արէօպագի մէջ ևս... „լեռը մուկ ծնեց“, երբ 61-րդ յօդուածն ևս, մի վայրկեան բերկրանք ու խանդավառութիւն տարածելուց յետոյ՝ գնաց վիժելու արեան ու աւերածի անդունդներում, — դարձեալ մեր իմաստուն կրիտիկոսների աչքում՝ հայկական „ձախորդ քաղաքականութիւնն“ էր յանցաւոր...

Այդպէս է միշտ տրամաբանել մեղկ ու լալկան անճարը։ 1895—96 թուականներում, երբ վիժեց ժամանակաւորապէս հայ յեղափոխական շարժումը՝ հայրենիքի վիթխարի զուլումների հանդէպ նոյն հայկական անճարութիւնը մէկ յանցաւոր և մէկ միայնակ պատասխանատու էր ճանաչում — հայ յեղափոխականին։

1878-ին և այնուհետև երկար ժամանակ՝ քաւութեան նոխազներ էին ներսէս պատրիարքը և իր աշխարհական ու կղերական գործակիցները։ Հայոց ռեֆորմների ու ինքնավարութեան ծրագիրները վիժել էին — ըստ այդ անողոք կրիտիկոսների—որովհետև ներսէսը, Խրիմեանը իրենց անխոհեմ քայլերով գրգռել էին ռուսներին, որովհետև հայկական խնդիրը անշնորհք ձևով էր ներկայացրել Եւրոպային, որովհետև պատրիարքը գործել էր ինքնագլուխ և ազգային հաւաքական կամքը չէր յայտնել պետութիւններին, որովհետև ներսէս, Խրիմեան, Նարպէյ, Զերազ եղել են վատ, անփորձ գիւանագէտներ և այլն և այլն։

„Դաւաճանութի՜ւն կայ գործի մէջ և կամ խաբուած է պատրիարքը“,—գոռում էին մի շարք երեսփոխաններ Ազգային Ժողովում, 1878 թ. յուլիս 21-ի փոթորկայոյզ նիստի միջոցին, երբ 12 անդամներ հարցապնդումն էին ուղղել պատրիարքին „հայկեան խնդրի առթիւ“, ի տես այն ընդհանուր յուսախաբութեան, որ առաջ էր բերել 61-րդ յօդուածը։ Եւ Պէկեան էֆէնտի արտասանում է իր մեղադրական ճառը, ամեն վայրկեան ընդհատուելով և ծանր վիրաւորանքներ ստանելով տաքարիւն ու անզուսպ Վարժապետեանից։

Ազգային հաւաքական կամք մը պէտք էր յայտնել Եւրոպիոյ օրինաւոր և հանդիսաւոր կերպով (*légalement et solennellement*), ժողովրդական հանրագիրներ պէտք էր հաւաքել և այլն... Եթէ պաշտօնապէս և ազգովին բողոք երթար, հայոց հարցը վիճաբանութեան կ'ենթարկուէր Բերլինի մէջ... Մինչդեռ ոչ մի վիճաբանութիւն չ'եղաւ *)...

Խնդիրը վիժել է, ըստ Պէկեան էֆէնտիի, որովհետև՝

Պատրիարքը, առանց անգամ Ազգային Ընդհանուր Ժողովով գումարելու, գործել է մենակ, իր մի քանի խորհրդականներով... Եւրոպան չի ընդունել Պատրիարքի ձայնը, իբրև ազգի ձայն...

Եւ քսան տարի յետոյ՝ անգամ Նուպար փաշայի պէս դիւանագէտ գործիչը իր հեղինակաւոր խօսքով նիրահարում էր Պէկեանների անհեթեթութիւնը։ Ներսէս պատրիարքը, նրա ասելով, գլխաւոր պատասխանատուն է մեր բոլոր դժբախտութիւնների, նաև 1895—96-ի ջարդերի **)։

Այդպէս է գրւում պատմութիւնը... Ներսէսն էր, ուրեմն, որ փոխարինել տուեց Սան-Ստեֆանօի 16-րդ յօդուածը Բերլինի 61-րդ յօդուածով։ Ներսէսն էր և ոչ լորդ Սալսբիւրին, որ յետ մղեց Ռուսաստանի հովանաւորութիւնն ու ապագայ գրաւումի ծրագիրները և յօրինեց ընդհանուր եւրոպական հովանաւորութիւն... Ներսէսն էր և ոչ Անգլիան, որ ռուսական առաջխաղացութիւնը արգելելու նպատակով՝ խլեց Թիւրքաց Հայաստանը Մօսկովի ձեռքերից և մատնեց վերստին սուլթանական բռնապետութեան... Որքա՜ն հզօր և ազդեցիկ է եղել այդ Ներսէսը։

Ce n'est pas sérieux!...

Անշո՜ւշտ, եղել են վրիպումներ ու սխալներ։ Անշո՜ւշտ, պատմական վայրկեանի բարձրութիւնից շատ և շատ վար են եղել 1878 թուականի գրեթէ բոլոր դերակատարները,—թէ՛ Ներսէսը, որի կրակոտ ու ոստոստուն խառնուածքին միանգամայն անծանօթ էր չափի ու տակտի զգացումը, թէ՛ Խրիմեանը, որի պարզ, նահապետական հոգու վրայ կատարել էին մի վրդովեցուցիչ բռնութիւն, հագցնելով դիպլոմատի ծիրանի և ղրկելով Եւրոպայի սալօնները, ուր նրա զմայլելի *humour*-ը սրախօսելու և զարմանալու անսպառ նիւթ էր գտնում, առանց սակայն յարմարելու դիւանագիտական արհեստի ամենապարզ պահանջներին. թէ՛ խորէն Նար-

*) Ատենագրութիւնք Ազգային Ժողովոյ 1878 թ.։

**) Մի այդպիսի յայտարարութիւն արել է, ըստ երևոյթին, Նուպար փաշան պ. Զօպանեանին։ (Տես վերջինի յօդուածը „Պատասխանատուութիւնները“ խորագրով, „Անահիտ“, յունուար 1899)։ Պէտք է ատոյգ համարել պ. Զօպանեանի այդ վկայութիւնը, և առաւել, որ վերոյիշեալ յօդուածը հրատարակուած է փաշայի կենդանութեան օրով։

պէյը, որ իր լեզուական ու հոգեւորական ձիրքերին չէր միացնում բաւականաչափ լրջութիւն, և թէ, վերջապէս, երիտասարդ Զերաղը, որ անգամ իր ամենահասուն շրջանի մէջ, տարաբախտաբար, շատ քիչ է համապատասխանել իր կոչման, իր դժուարին քարոզչական պաշտօնին՝ Եւրոպայի հասարակական կարծիքի առաջ *)։

Ցարօրինակ էր, անշուշտ, Վարժապետեան պատրիարքը, երբ նա մի ձեռքով սիրաշահում էր ռուսներին, միւս ձեռքով դաւեր էր սարքում նրանց դէմ, մի կողմից ղրկում էր Ղարպէյին Պետերբուրգ և Իզմիրլեանին Էջմիածին (Սան-Ստեփանոյի դաշնագրից յետոյ), որպէս զի դիմումներով ու աղերսներով ձեռք բերէին հայկական ավտոնոմիա Ռուսաստանի հովանաւորութեան տակ, միւս կողմից, Պոլսի անգլիական դեսպանի ազդեցութեանը ենթարկուած՝ շարունակում է հակառուսական գրգռիչ յայտարարութիւններ անել նրան, մերժում է իր հօտի անունից Ռուսաստանի „ազգակուլ և կրօնակուլ“ հովանաւորութիւնը և իր բուռն համակրանքն է յայտնում Թիւրքիոյ բարեկամ Անգլիային, նրա աջակցութիւնը հայցելով... Եւ այդ բոլորը տեղեկագրում է Լոնդոն ու հրատարակւում „Կապոյտ Գրքի“ մէջ, ի լուր աշխարհի։

Իսկ այնտեղ, Լոնդոնում, դիւանագէտի ծիրանի հագած „Վասպուրականի Արծիւը“, նոյն Անգլիայի աջակցութիւնը ստանալու մտահոգութեամբ, մոռանում էր իր „Վանգոյժը“, մոռանում էր տաճկական ռէժիմի դարաւոր սարսափները և լորդ Սալսբիւրիի հետ տեսակցութեան միջոցին փաստաբանում էր Թիւրքերի դատը, օսմանեան կայսրութեան ամբողջութիւնը, և ասում էր, որ հայերը տառապում են սոսկ քրդերի հալածանքներից **)։

Ցարկանոնութիւններն ու հակասութիւնները անհաշիւ են մեր պատմութեան այդ նշանաւոր դրւագի մէջ։ Հայ քաղաքական գործիչները, իմանալով, որ դիւանագիտական արհեստը ինքնին արդէն կեղծիք է, երկդիմութիւն ու խարդախութիւն, իրենք ևս իւրացրել էին նոյն cache-cache-ի ու խաբէութեան մեթոդը. Սակայն, կրկնում ենք ծայրայեղօրէն միամիտ ու անարդար կը լինէր՝ այդ տարօրինակութիւններին ու հակասութիւններին վերագրել հայկական դատի բռնած ընթացքը և նրա վերջնական ֆիասկոն։

Ասենք դարձեալ — այդ դուալիզմը, երկուութիւնը միմիայն Ղարսէսի ու նրա խմբի քաղաքականութեան մէջ չէր, այլ ամբողջ հայ մտաւորականութեան մէջ։ Կային դեռ Ռուսաստանի թեւարկութեան եռանդուն կողմնակիցներ նոյնիսկ Թիւրքահայ մտաւորականների շարքերում, իսկ կովկասեան հայութիւնը, ի դէմս իր առաջադէմ տարրերի, տեսնում էր միակ փրկութեան խարիսխը՝ նոյն ռուսական թեւարկութեան մէջ։

Շփոթ, հակասական մտքերի ու տրամադրութիւնների յորձանքի մէջ տարուբերւում էր ազգային քաղաքականութեան նաւակը, սակայն.. այդ յորձանքները չէին, որ անդրադարձան հայոց հարցի էւոլիւսիոնի վրայ, նրանք չէին, որ որոշեցին Հայաստանի ճակատագիրը, Բերլինում, լորդ Սալսբիւրիի և Շուվալովի քաղցրաթթու բանակցութեան միջոցին, և նրանք չէին պատճառը՝ որ Բերլինի վեհաժողովի նախօրեակին ցարն ու իր մինիստրները Պետերբուրգում քաղաքավարի մերժումով պատասխանեցին Խորէն Ղարպէյի ներկայացրած հայկական ավտոնոմիայի առաջարկին։ Միջպետական դիւանագիտութիւնը աւելի հիմնական դրդիչներ ունի, նա չի կախուած այդքան չնչին պատահարներից...

Զարիքը հայկական դիւանագիտութեան այս կամ այն ձևի ու վրիպումի մէջ չէր, այլ նոյն այդ դիւանագիտութեան էութեան մէջ։ 1878-ի հայոց վարդագոյն երազների խորտակման պատճառն այն էր, որ հայութիւնը իր դատը առաջ քշելու համար դիմել էր դիւանագիտական միջոցների և միայն նրանց։ Հիանալի էր այն եռանդն ու աճապարանքը, այն տենդային ու համերաշխ գործունէութիւնը, որ տիրում էին այդ պատմական վայրկեաններում հայ բուրժուա ու ժողովրդական տարրերի մէջ, ընդհանուր, համազգային դատի շուրջը, սակայն չկար այդտեղ և նոյնիսկ արհամարհուած էր ամենաէականը, — ժողովրդի պատրաստութիւնը, նրա իրականացման ուժը։ Չկար „երկաթէ շերեփը“, որի բացակայութիւնը այնքան դառնօրէն ողբում էր Խրիմեան Հայրիկ, իր վերադարձին Բերլինից...

1878-ի հայ սերունդը (բուրժուազիան, ղեկավարող մտաւորականութիւնը) հարազատ յաջորդն ու շարունակողն էր 60-ական թուականների հայ „սահմանադրական“ սերնդի. նոյն միամիտ խանդավառութիւնը „կուլտուրական“ նուաճումների շուրջը (դպրոցների, վանքերի, հոգեւորական ազատ մարզանքների և այլն) և նոյն տառապիկ, անդարմանելի սարսափը՝ ոչ-օրինական, ապրստամբական միջոցների առջև։ Քսան տարին ոչ մի փոփոխութիւն չէր բերել այդ ողբալի, կրաւորապաշտ մտայնութեան մէջ, մինչդեռ շուրջը ամենուրեք, օսմանեան տիրապետութեան հորիզոններում սթափւել էին

*) Պ. Մինաս Զերաղ՝ մօտ քսան տարուայ իր քաղաքական հրապարակագրութեամբ՝ վաստակել է իր հաւատ ու գնահատելի տեղը հայկական խնդրի պատմութեան մէջ, որ մենք թերևս կը բնորոշենք յետագայում։

**) Խրիմեան յետոյ ասել էր, որ ինքն այդպիսի յայտարարութիւն չի արել լորդ Սալսբիւրիին։ Եթէ հանգուցեալ կաթողիկոսի յիշողութիւնը չէր խաբում իրեն՝ պէտք է ենթադրել, որ թիւրիմացութեան հեղինակը իր թարգմանն է, պ. Զերաղը։

քրիստոնեայ համայնքները և ըմբոստացման ճանապարհով դիմում էին դէպի ազատութիւն...

„Երկաթն“ արհամարհող ազգը՝ ինքն ևս արժանացաւ դիւանագիտական արհամարհանքին։ Լորդ Բիկոնսֆիլդ չի էլ ուզում ընդունել հայկական պատգամաւորութիւնը Բերլինի մէջ. Խորէն Ղարպէին քաղաքավարի ճամբայ են ձգում Պետերբուրգից, հասկացնելով, որ 16-րդ յօդուածից աւելին պահանջել աններելի յանդգնութիւն է, իսկ Իգնատիեվ, ամենից Ֆրանս ու շիտակ և գուցէ ամենից լաւ տրամադրուած դէպի հայ դատը, ասում էր պարզապէս Ռուսճուգլեան վարդապետին — որ եկել ներկայացել էր նրան, Ղերսէսի հրահանգով (Ադրիանուպօլսում, ռուս-թիւրքական հաշտութեան բանակցութիւնների միջոցին) և խնդրում էր ռուս զօրքի գրաւած հայկական գաւառներին ևս շնորհել նոյն ազատութիւնը, որ պիտի տրւէր Բուլգարիային.

Թիւրքահայերը — ասում էր Իգնատիեվ — չպիտի կարենան ստանալ բուլղարաց ազատութիւնը, քանի որ հայք անպատրաստ գտնուեցան և դարձած են մեռեալ տարրք Հայաստանի մէջ *)...

Ռուս լիազօրի այդ ուշագրաւ յայտարարութիւնը ամեն բան պարզում է՝ „յանցանքներն“ ու „պատասխանատուութիւնները“ որոնող կրիտիկոսներին։ Այդտեղ է մատնանշուած բուն չարիքը, — մեղկութեան և անարգ կրաւորականութեան այն հինաւուրց ախտը, որով մինչև օրս էլ վարակուած է հայ բուրժուազիան ու ազգի մեծամասնութիւնը և որ վերջին քառորդ դարու մէջ կաշկանդեց ազգային շարժման ծաւալն ու սլացքը, մատնեց ժողովուրդը անզէն ու անել յուսահատութեան, դատապարտեց ըմբոստ փոքրամասնութիւնները մի չափազանց անհաւասար, օրհասական պատերազմի, որը ի տեղի հարկադրելու և դէպի դրական գործ մղելու դիւանագիտութիւնը, առաջ բերեց մշտնջենական ֆիասկոներ և „զուլումներ“...

Ահա թէ որտեղ և ինչ ուղղութեամբ պէտք է գործադրուէր հայ պատմախոյզ կրիտիկոսի „ինքնամտրակման“ եռանդը։

Չլինէ՞ր հայը „մեռեալ տարր“ 1878-ին, կամ յետագայ թուականներում, չլինէր նրա անսահման համակերպութիւնն ու դիակնային անշարժութիւնը հանդէպ քրդի ու թիւրքի անվերջ բռնութիւնների, լինէր նա գէթ փոքր ինչ „մշակուած“ յեղափոխական քարոզով, ունենար նա՝ իր անթիւ դպրոցների ու վանքերի հետ՝ գէթ մի քանի „հեթէրիական“ կազմակերպութիւններ, որոնք 19-րդ դարի սկզբներում սունկի պէս բսել էին ստրուկ Ցունաստանի մէջ, զուտ կրթական ազգային հաստատութիւնների ծոցում, — Անգլիան, հզօր ու յաղթական Ալբիոնը, այնպէս չէր վարի հայութեան հետ և Լոնդոնի մէջ յանուն հայկական ինքնավարութեան սկսուած ուժեղ պրօպագանդը չէր ունենայ այնքան ողբալի մի վախճան...

Եւ դեռ զարմանալի է, որ այնքանը շահեցանք։ Զարմանալի է, որ առանց մի կաթիլ յեղափոխական արիւն թափելու, լոկ „փայտէ շերեփ“ ցուցադրելով, օսմանեան հայութիւնը ձեռք բերեց 1878-ին դիւանագիտական այն շնորհը, որ կոչւում է 61-րդ յօդուած և որ այն ժամանակուայ պայմաններում յիրաւի մի խոշոր վաստակ էր, յոյսերի ու ակնկալութիւնների մի բոլորովին նոր աղբիւր... Հայոց հարցը միջազգային բնոյթ էր ստանում, Թիւրքիան հանդիսաւորապէս պարտաւորւում էր ապահովել հայ տարրը անհրաժեշտ բարենորոգումներով և Եւրոպան նոյնքան հանդիսաւորապէս ստանձնում էր վերահսկողի պաշտօն, միանգամայն իրաւունք ու պարտաւորութիւն՝ միջամտելու հայկական գործերի և հայ-թիւրք յարաբերութիւնների մէջ։ Ֆիասկօն յետոյ պիտի գար, իսկ անմիջական տպաւորութիւնը Բերլինի Վեհաժողովից յետոյ, հայկական աշխարհի մէջ՝ աւելի շուտ յաղթանակի տպաւորութիւն էր, քան պարտութեան։ Գոհ մնացին անգամ նրանք, որոնք հանդիսացել էին ամենաջերմ պաշտպաններ ռուսական թեւարկութեան և որոնց համար փրկութեան միակ խարիսխն էր Սան-Ստեֆանօի 16-րդ յօդուածը և Ռուսիոյ գրաւումը։ Գոհ մնաց այդ տրամադրութեան ամենամեծ porte-parole-ը, Գրիգոր Արծրունին։ „Մշակ“-ը յայտնում էր իր այդ գոհունակութիւնը պ. Շերազի „Թէ ի՞նչ շահեցանք Պերլինի վեհաժողովէն“ տեսութեան նախաբանի մէջ *)։

Գոհ մնաց և կովկասահայ մտաւորականութեան մեծ, պահպանողական կոչուած բանակը։ Թիֆլիսի „Մեղու“-ն բացայայտ կերպով խոստովանում էր, որ թիւրքահայերի համար բար՛բախտութիւն է Եւրոպայի հաւաքական և մասնաւորապէս Անգլիայի խնամակալութեան ենթարկուիլը։ „Անգլիան, ասում էր նա, ամենաքաղաքակրթուած ազգն է, հայերը նրա հովանաւորութեան տակ՝ թէ տնտեսապէս կ՛առաջադիմեն և թէ քաղաքականապէս կը զարգանան“..

Գոհ մնաց թիւրքահայ նշանաւոր վիպասան Դ. Երենց „Մասիս“-ի մէջ հրատարակած իր մի յօդուածով նա յանդիմանում էր այն հայ մտաւորականներին, որոնք յուսահատական ժեստեր էին անում Բերլինի ֆիասկօի առթիւ.

Ի՞նչ տեղիք կայ յուսահատութեան՝ բացականչում է „Երկուսի՞ի հեղինակը միթէ՞ Լէնկթիմուր զուռն է հասեր...

Դերենց յոյս է յայտնում, որ հայ ազգը պատմական այնքան փոթորիկներից ողջ պրծնելով, Անգլիոյ հովանաւորութեան տակ չի կարող ջնջուիլ։ Իսկ

*) Տես Ադրիանուպօլսոյ առաջն. փոխանորդ Ռուսճուգլեան վարդապետի մէմուարները, հրատ. Ռազմիկ-ի մէջ, 1907 թ. („Դագու�Հայկական Խնդրոյ“)։

*) 1878 թ. № 209։

երբ բոլոր յոյսերը կը կտրեին, այն ժամանակ, ասում է Ծերենց, Ռուսաստանին կը միանանք *)...

Միամտութիւն է բուրում վիպասանի հետևեալ յայտարարութիւններից.

... Ինչ որ քաջութիւնը չի կրնար ընել, համբերութիւնն ու յարատևութիւնը կրնան ընել... Ոչ թէ դինուց քաջութիւնը կամ ապստամբական շարժումներն ազատութիւն և կեանք բերին մաջառ ազգին, այլ համբերութիւնն ու ժամանակի պարագաները **)...

Այդ միամիտ պատմափիլիսոփայութեանը կարծես մի դառն ու մտրակող պատասխան էին միւս ազգային վիպասանի, „Կայծեր"ի լացող ու կայծակող հեղինակի այս առնական խօսքերը.

Դատա՞ր կ յոյսերով ենք ապրում.. Դիակները լուռ համբերութիւն ունին... Ազատութիւն տրուում է այն ազգերին, որոնք իրենց ազատութիւնը սրով պաշտպանել գիտեն ***)...

Որ 61-րդ յօդուածը մի կարևոր նշանաւոր էր այն ժամանակուայ պայմաններում թիւրքահայ ժողովրդի համար—դրան ապացոյց է և այն դժգոհութիւնը, որ նա յարուցեց թիւրք կառավարութեան մէջ։ Վերջինս, ինչպէս տեսանք, սկզբներում խիստ գոհ էր հայկական խնդրի արծարծումով և նոյնիսկ ինքն էր յորդորում հայոց պատրիարքին՝ առաջադրել պետութիւններին այդ խնդիրը, արգելք լինել Հայաստանի գրաւման, ջնջել տալ Սան-Ստեֆանոյի սպառնալից 16-րդ յօդուածը։ Սակայն, երբ տեսաւ, որ հայերը Բերլինի մէջ կօնտրոլ և դրական երաշխիքներ են ստանում Եւրոպայից իրենց երկրի ապահովութեան համար, Աբդիւլ Համիդ կատաղեց և սպառնալիքով հրամայեց պատրիարքին յետ կոչել հայոց պատգամաւորութիւնը Բերլինից։ Այդ ժամանակ էր, որ Ներսէս արտասանեց իր խիզախ մերժողականը։ Ահա թէ ինչպէս էր պատմում ինքը պատրիարքը Ազգային Ժողովի 1878 թ. հոկտեմբեր 6-ի նիստի մէջ.

... Աստ սպառնալիք ու բարձրագոյն հրաման եկաւ ինձ Դռնէն՝ պատգամաւորները Պերլինէն յետս կոչելու, որուն պատասխանեցի, թէ աւելի լաւ կը համարէի կախիլ պատրիարքարանէն ****)...

Ինքը Վարժապետեան շատ լաւ կը գիտակցեր 61-րդ յօդուածի թերութիւնները։ Յուլիս 21-ի իր պատմական ճառի մէջ նա ասում էր՝ ի պատասխան սկեպտիկներին ու յուսահատներին.

Ցեա՛ղը երեսփոխանք... Մեր խնդիրը անմիջապէս և կատարելապէս չլուծուեցաւ... Եւ ո՞ր ազգ կրցած է յանկարծակի կերպով իր բաղձանացն ի կատար հասնիլ... Ո՞ր է, սակայն, կորուստը, ո՞ր դժբախտութիւն, ո՞ր յուսահատութիւն... Մեծ բան է արդէն, ինչոր ստացանք... Ել մոռացած չենք...

Դժուար է, արդարև, լուրջ առարկութիւններ հանել այդ բացատրութեան դէմ, նայելով իրերին այն ժամանակուայ ակնոցներով։ Եւ Ազգային Ժողովը իր լիակատար վստահութեան քէն տուեց Ներսէսին։ Ընտրուած Ցանձնաժողովը միառմի քննելով պատրիարքի բոլոր գաղտնի թղթերը, եկաւ յայտարարեց համագումար Ժողովին, որ Ներսէսի բարեխղճութիւնը, անձնուիրութիւնն ու շիտակութիւնը վեր է ամեն կասկածից և որ նա „վարուած է ազգին շահուց համեմատ"։ Վստահութեան բանաձևը ընդունուեց կարելի է ասել, միաձայն։ Միակ ընդդէմ քուէարկողը Պէկեան էֆէնտին էր, որ մի քանի ամիս շարունակ ամբաստանել էր պատրիարքին, ուղղելով նրա դէմ ամենածանր մեղադրանքներ ու կասկածներ։ Մի խումբ երեսփոխանների կողմից առաջարկ եղաւ հրաժարեցնել նրան Ազգային Ժողովից, իբրև խռովարարի և ինարիգանի. բայց նա շտապեց ինքը զրկել իր հրաժարականը *)։

Այո՛, ո՞վ կարող էր այն ժամանակ գուշակել... գալիքը։ Ո՞ր գիւային հանճարը կարող էր նախատեսնել այն հրէշաւոր դաւաճանութիւնը, որ պիտի սադրէր հայութեան դէմ սահմանադրական և ազատասէր Անգլիան։

Անգլիա և Ռուսաստան... Մէկի հովանաւորութիւն, միւսի—գրաւում։ Որի՞ն ընտրէր թիւրքահայ հասարակութիւնը։ Մինը տարածել էր դարերից ի վեր ազատութեան ու անհատականութեան սկզբունքը, ցանել էր երկրագնդի բոլոր ծայրերում համեմատաբար ազատ ու ինքնավար հասայնքներ, միւսը հանդիսացել էր իր ամբողջ պատմութեան ընթացքում երդեալ ոսոխ ազատութեան և ազգերի անհատականութեան։ Որի՞ն ընտրէր։ Ռուսաստանը՝ անգամ իր լաւագոյն, ազատամիտ թագաւորի օրով, հայ ժողովրդի անբաւ զոհողութիւններից, հայ զօրավարների անգնահատելի ծառայութիւններից յետոյ, մերժում ու արհամարհում էր հայ տարրի ամենահամեստ ինքնօրինութեան տենչանքները, տալիս էր նրան 16-րդ ողորմելի յօդուածը, որպէս զի քիչ յետոյ հայկական նոր հողերի միացումով՝ շարունակէ ամբողջ հայութեան ազգազերծման և ռուսացման պրոցէսը...

Ի՞նչ զարմանք՝ որ թիւրքահայ հասարակութեան համակրանքը թեքուեց դէպի Անգլիա։ Բրիտանական հովանաւորութեան երազը շատերին էր ոգևորում,—նաև Ներսէսին, Խրիմեանին, Նարպէյին։ Այդ հրապուրիչ երազի ազդեցութեան տակ էր, անտարակոյս, որ Խրիմեան 1878-ին Բերլինից „աւետիս" էր զրկում Կ. Պոլսի իր բարեկամին... „Հայաստան յերկունս է—գրում

*) „Մասիս", 1878 թ. յուլիս 23։

**) Մաջառները բացառութիւն չեն կազմել ազգերի պատմութեան մէջ. Նրանք ևս արիւնալի կռիւներով և մեծամեծ զոհերով են ձեռք բերել իրենց ազատութիւնը։ Մ. Վ.

***) „Մշակ", 1878 թ. № 22։

****) Ատենագրութիւնք Ազգ. Ժողովոյ. 1878 թ. էջ 181։

*) Ատենագր. Ազգ. Ժող. 1878 թ., էջ 188.

էր նա — միայն ծնելիք զաւակը մա՞նչ պիտի ըլլայ թէ աղջիկ, այդ չենք կրնար որոշել"... Իսկ միւս պատգամաւորը, Խորէն Նարպէյ, գրում էր Պէկեանին 1878 թ. յունիս 24-ին.

Կ'երևի առայժմ, թէ Անգղիա կուզէ զմեզ իւր պաշտպանութեանը ներքև առնուլ, անգղիացի կառավարչի մը յանձնելով զՀայաստան... Ուրիշ միջոցներէ լաւագոյնն այս է, որով կը խալսիմք... բարբարոսութենէն և ռուսաց համայնակուլ ազդեցութենէն։ Մեր ջանքն այն է, որ մեր առանձին ինքնավարութիւնը ձեռք ձգենք. այլ եթէ այդ անկարելի լինի՝ հարկաւ պէտք է գլուխ ծռենք և Անգղիոյ հովանաւորութիւնն ընդունինք, որ կրնայ մեր հայրենիքը բեղմնաւորել և բարեկարգել *)։

Պատրանքը շուտով փարատուեց։ Այդ նամակի թուականից քիչ յետոյ՝ հրատարակուեցաւ Կիպրոսեան անգլօ-թիւրք դաշնագիրը, որին նենգաւոր Ալբիոնը պիտի զոհաբերէր հայոց դատը և հայ ժողովուրդը...

61-րդ յօդուածը արագ արագ պիտի ընթանար այնուհետև դէպի վիժուում... Հայկական դրամայի առաջին արարուածի վարագոյրն էր, որ իջաւ Բերլինում։

***

Կացութիւնը աւելի ևս վատթարացաւ Բերլինից յետոյ... Եւ երբ 1879-ի յունուարին խառն ժողովի մի պատգամաւորութիւն ներկայացաւ սադրազամին՝ յարաճուն հարստահարութիւնների մասին տեղեկութիւններ տալու և գանգատ բառնալու, սուլթանի վարչապետը պաղ, թշնամական ընդունելութիւնից յետոյ, ասաց ի միջի այլոց.

Օսմանեան ամեն կարգի հասարակութիւնները, հայ, արաբ և այլն, պարտաւոր են կառավարութեան ջանիցը օգնել և ոչ դժուարութիւններ յարուցանել. դժբախտաբար, հայոց ազգը... այս միջոցին շեղած է սոյն շաւղէն, կը դիմէ օտար աղբիւրներու... Օտարը ի՞նչ կրնայ ընել... Հայոց ազգը պէտք չէ օտարներուն գործիք ըլլայ **)։

Եւ յայտնում՝ է, որ Ասիական Թիւրքիայով զբաղուելու շատ ժամանակ չունի, հրահանգում է համբերել, խոստանում՝ է երկու քննիչ յանձնաժողով ղրկել, մինը՝ քրիստոնեայ նախագահով՝ Եւրոպական Թիւրքիա, միւսը՝ տաճիկ նախագահով՝ Ասիական Թիւրքիա...

Նորէն թագրիրներ, դիմումներ ու աղերսանքներ, ապա և պատրիարք ներսէսի հրաժարական...

Սակայն ոչ մի թագրիր, ոչ մի ազդարարութիւն, ոչ մի հրաժարական չէր կարող փոփոխել Բ. Դրան այդ պաղ, արհամարհոտ անտարբերութիւնը, որ հետևանք էր. 61-րդ յօդուածն ստորագրող Եւրոպայի անտարբերութեան։ Անգլիան արդէն մոռացել էր այդ յօդուածի „անյապաղ" բառը և լորդ Սալսբիւրիի բերնով յայտարարում՝ էր.

*) Ատենագր. Ազգ. ժող. 1878 թ.։

**) Ատենագրութիւնք, 1879 թ. էջ 345։

Մինչև որ Թիւրքիոյ ելևմտական վիճակը չբարւոքուի, Ասիոյ հիմնական բարենորոգմանց պէտք չէ սպասել...

Եւ 1879-ի մայիս 11-ի նիստում, Ազգային ժողովի մէջ, նախագահ Իզմիրլեան արտասանում էր արդէն իր դամբանականը 61-րդ յօդուածի վրայ.

... Գիտեմ, որ ամեն երեսփոխան անհամբեր պիտի ուզէ տեղեկանալ, թէ ի՞նչ են Հայաստանի բարեկարգութեան համար կառավարութեան ձեռք առած միջոցները... Ամենքդ կարդացիք Անգղիոյ արտաքին գործոց վեմ. պաշտօնեի՝ Լօրդ Սալիսպրրիի յայտարարութիւնը...

Համբերե՛մք, Տէրը երեսփոխանք, քիչ մ՝ալ... Այս համբերութեան խրատը կուտանք մեր բոլոր գաւառական վարչութեանց, որք նորանոր հարստահարութեանց տեղեկագիրներով հետզհետէ կ'ողողեն պատրիարքարանը և Պերլինի դաշնագրին 61-րդ յօդուածին գործադրութեան ժամանակը կը հարցնեն... Գիտեմ պիտի ըսէք, թէ համբերութիւնն ալ չափ ու սահման ունի։ Սակայն մեր յոյսը կտրած չենք մեր Վեհափառ Սուլթանէն... և Պերլինի դաշնագիրն ստորագրող կառավարութիւններէն։

Համբերութի՞ւն... Իսկ ապագայ Կարմիր Գազանը իր մահահոտ ապարանքների մէջ որոճում էր արդէն հայոց հարցը լուծելու „արմատական միջոցները"...

Իզմիրլեան զուր էր այնքան անհանգստանում, կարծելով, թէ Ազգային ժողովի համբերութիւնը պիտի հատներ շուտով և թէ նա ընդունակ էր թերևս դիմելու... „ծայրայեղ", „անիսոհեմ" քայլերի։ Հայկական բուրժուազիան ցոյց տուեց, որ իր համբերութիւնը անչափ է և անսահման։ Նա այսօր ևս — 35 տարուայ եղերական փորձերից յետոյ—նոյն կրաւորական համբերութիւնն է քարոզում, մերժելով ժողովրդին ինքնապաշտպանութեան և դիմադրութեան միջոցներ. նա այսօր ևս կենտրօնացրել է իր բոլոր յոյսերն ու ձիգերը դիւանագիտական ձեռնարկների մէջ։

Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԻԱՆՔ

ՄԻՋԿՈՒՍԱԿՑԱՅԻՆ ՀԱՄԵՐԱՁԽՈՒԹԻՒՆ ԻԶՄԻՐԻ ՄԷՋ

ՅԱՅՏԱԳԻՐ

ՈՒՂՂԻԱԾ ԻԶՄԻՐԻ ՇՐՋԱՆԻ ՀԱՅԵՐՈՒՆ

Հայրենակիցնե՛ր,

Ներշնչուած այն մեծ պարտականութեամբ, որ դրուած է հայութեան բոլոր հատուածներու վրայ՝ քաղաքական ներկայ բացառիկ կացութեան հանդէպ, և մանաւանդ խրատուած այն դառն փորձերէն, որոնք անցեալին մէջ այնքան ոյժեր վատնել տուին, Իզմիրի երեք հայ քաղաքական կուսակցութիւններու տեղական Մարմիններ՝

Դաշնակցութեան Իզմիրի Կոմիտէն
Հնչակեան Իզմիրի Մասնաճիւղը և
Սահմանադիր–Ռամկավար Ակումբը

խորհրդակցական շարք մը ժողովներէ վերջ՝ որոշեցին համ-

բաշխութեան դալ, միմեանց ձեռք մեկնել և համախմբիլ Հայկական դատի շուրջը, միասնաբար աշխատելու և ներդաշնակ գործելու համար։

Միջկուսակցային այս համերաշխումի նպատակն է՝ բոլոր ոյժերը ի սպաս դնել Հայկական տագնապին, որուն լուծումը օգտակար է նոյնիսկ պետական շահերու համար, ամեն ջանք գործ դնել վերցնելու մէջտեղէն այն բոլոր մանր, ապարդիւն ու վնասակար կռիւները, որոնք տարիներ ու տարիներ պառակտման և հետևաբար ոյժերու ամլօրէն վատնման պատճառ եղան, անկեղծօրէն ձգտիլ համերաշխութեան մէջ դնել հայ հասարակութեան չէզոք խաւերը, որպէս զի կարող ըլլանք՝ ընդհանուր համաձայնութեամբ՝ կուսակցական և արտակուսակցական, արդիւնաւոր կերպով ծառայել ազգային կենսական շահերուն, Օսմ. Սահմանադրական Բէյթիմի ամրապնդման և մեր ժողովուրդի վտանգուած ապահովութեանը,—մեծագոյն ցաւը, որ՝ կրերու տխուր բերմամբ՝ ծառացած է ամբողջ հայութեան առջև։

Միջկուսակցական Մարմինը որոշած է յատուկ կանոնագրով ճշտել ներկայ համաձայնութեան նպատակը, ներքին փոխադարձ յարաբերութիւններու սահմանները, որպէս զի կարելի ըլայ ներքին պառակտումներու և թիւրիմացութեանց առաջքն առնել ու ներդաշնակութիւն մտցնել բոլոր աշխատութիւններու մէջ, կուսակցական կամ հանրային, որոնց կէտ նպատակը պիտի ըլլայ՝ ծառայել Երկրի ժողովուրդին և անոր իրաւունքներուն ամրապնդման։

Համերաշխութեան այս ձեռնարկն է, որ հաճոյքով կուգանք յայտարարել Իզմիրի շրջանի բոլոր կուսակցական մարմիններուն և մանաւանդ հայ հասարակութեան, որը, խորունկ հաւատք ունինք, անխառն բերկրանքով պիտի ընդունի քաղաքական հայ մարմիններու՝ երկար ատենէ ի վեր փափաքուած այս մերձեցումը և համագործակցութիւնը։

Կը սիրենք հաւատալ, որ այդ բերկրանքի հետ միասին, չէզոք հասարակութեան զանազան խաւերու ներկայացուցիչները, կուսակցական բոլոր շրջանները, ինչպէս նաև ազգային բոլոր հիմնարկութիւններու ղեկավարները անկեղծութեան, շիտակ վերաբերումի և քաղաքացիական պարտականութեան տպաւորներ պիտի տան, ուժգնօրէն աջակցելով այս նոր շարժման, որ ուրիշ շատ տեղեր արդէն սկսած և մարմնացած է։ Այլ ևս ոչ մի դաւ, ոչ մի շարամիտ շշուկ, ոչ ալ քայքայիչ յոռետեսութիւն։ Ժողովրդական դատի թշնամիներ պիտի նկատուին բոլոր անոնք, կուսակցական թէ չէզոք, որոնք ղրդուած անձնական շահերէ և կամ տարուած յետին մտքերով՝ կը փորձեն խանգարել կամ կասեցնել այս սրբազան շարժումը։

Ու այդ հաւատով և յոյսով՝

Կ'ողջունենք համերաշխական սիրուն ձեռնարկները Եգիպտոս, Կիլիկիա, Վասպուրական, Պալքան և այլուր, որոնք այս շարժման անդրանիկ օրինակատուները եղան, արժանի մեր համակրանքին ու աջակցութեան։

Կ'ողջունենք սոյն նպատակով Իզմիրի մէջ սկսած հանրային շարժումը և հաւատ ունինք, որ հակառակ անդպատ զուգադիպութիւններու, ան պիտի աճի, մեծնայ և եթէ ոչ այսօր, դէթ վաղը պիտի տայ իր կազդուրիչ պտուղները։

Կ'ողջունենք Մայր Երկրի ցաւատանջ ժողովուրդը, որ ակնդէտ կը սպասէ իր հեռաւոր ու բախտաւոր եղբայրներու աջակցութեանն ու համակրանքին և հրապարակով կը խոստանանք՝ անոր ի սպաս դնել այս շրջանի բոլոր ուժերը, բարոյական և նիւթական, իբրև սրտայայտութիւն մեր կուսակցական և ազգային պարտականութեան։

Ցարգանք հայ ժողովուրդի արդար դատին,

Ցարգանք Հայ Դատին նուիրուած համերաշխութեան։

ԱՌԺԱՄԵԱՑ ՄԻՋԿՈՒՍԱԿՑԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ

ԻԶՄԻՐԻ

Իզմիր
1913 օգոստոս

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

Ընկերներ,

Նիստերի երկար շարանից յետոյ՝ ամսոյս 6-ին վերջացաւ Շահստանի Կ. Կոմիտէի I Շրջանային Ժողովը։

Նա ստիպուած էր զբաղուել, բացի կուսակցական անյետաձգելի հարցերից, որ բերուած կամ թողնուած էին Շ. Ժ.-ին որոշելու, նաև շատ ուրիշ հարցեր, որ վիճակուել էին նրան իբրև անդրանիկ ժողովի։

Նրա որոշումները կեանքի մէջ մտցնելու, իրագործելու է կոչուած Կ. Կոմիտէն։ Բայց ո՞վ չգիտէ, որ առհասարակ՝ աւելի հեշտ է որոշում կայացնելը, քան իրագործելը։ կեանքի մէջ մտցնելը։ Կ. Կոմիտէիս վրայ է ընկած մեր գործի ղեկավարութեան և մեր շրջանների անցուդարձի աչալուրջ հսկողութեան դժուարին պարտականութիւնը և պատասխանատուութիւնները յաջորդ Շ. Ժ.-ի և մեր ընկերների առաջ։

Ահա թէ ինչ պայմանների մէջ է ստանձնում այդ ծանր ու հաճելի գործը՝ Կ. Կոմիտէն։

Ընկերներ,

Զկայ մեր դժբախտ հայրենիքի վիճակով քիչ թէ շատ հետաքրքրուող մէկը, որ չխոստովանի, թէ այսօր Պարսկաստանը անունով միայն անկախ, իրօք եւրոպական պետութիւնների ձեռքին մի խաղալիկ է։ Զուրկ ենալով իր սեփական արդիւնագործութիւնը և նրա անհրաժեշտ քաղաքական ու տնտեսական պայմանները, նա տնտեսապէս էլ ստրկացած է այդ կապիտալիստ պետութիւնների կողմից։ Այս բոլորը զրկում է երկիրը ինքնուրոյն քաղաքականութիւն ունենալուց, անգամ այն ունենալու իրաւունքից։ Ժողովրդական ներկայացուցչութիւնն էլ խափանուած—ունենալու խոստումներն էլ կառավարութեան կողմից կասկածելի—որպէս զի կարելի լինէր յուսալ, թէ գէթ նա սկիզբ կը դնի երկրի մէջ մի որոշ ներքին քաղաքականութեան։

Պետական կեանքի այդ անորոշ, երերուն վիճակը դժուարացնում, երբեմն իսկ հնարաւորութիւն չի տալիս Կ. Կ.-ին՝ նախորոշելու աշխատաւորական քաղաքականութեան մի գիծ, մշակելու կռուի տակտիկա. մի բան, որ ուղղակի հրամայողական է մեզ համար, քանի որ կոչուած ենք մտածելու և աշխատելու իւրատեսակ պայմաններում ապրող մեր մի բուռն աշխատաւոր ժողովրդի համար։

Ինչ վերաբերում է մեր հարևաններին, որոնց հետ միասին և ձեռք-ձեռքի պիտի վարենք մեր պայքարը, այդ էլ մխիթարական ոչինչ չի տալիս մեզ։ Ժողովրդական կազմակերպութիւնները բառացի քայքայուած, մասսաները լքուած ու թմրած, հայրենասիրութիւնը վտարուած։

Այս է ահա կմախքօրէն պատկերացրած, այն երկրի քաղաքական ու տնտեսական վիճակը, որի մէջ կոչուած է կիրառելու մեր սկզբունքներն ու գաղափարները Կ. Կոմիտէն։

Ի՞նչ են ներկայացնում մեր սեփական շարքերն ու զանգուածները...

Պարսկաստանի շարժումներն այնքա՞ն խանդավառութիւն էին բերել մեր շարքերին. սակայն վերջին շրջանի ընթացքում տիրեց յուսախաբութիւն։

Աշխատաւորութիւնը, որ անմասն էր այդ շարժումներին, իր գրաֆ խորքում պահած ունէր միշտ մի ակնկալութիւն դէպ՝ նոցից, ապագայ լաւ օրերի և հանգիստ ապրուստի մի յոյս, որ չ՚իրականացաւ և յուսախաբութեան մէջ ձգեց նրան։

Բանակը, որ յեղափոխական ձգտումներով էր հրապարակ եկել, ենթարկուած չլինելով կազմակերպութեան, ուրեմն և նրա կարգապահական օրէնքներին, շուտով մերկացաւ իր անցանկալի պատկերով։

Մեր կազմակերպութիւնն այստեղ, ինչպէս յայտնի է, երկար տարիներ տարուած է եղել միայն Ցամկահայաստանի գործունէութեամբ, վերջին մի քանի տարին է միայն սկսել գործել բուն այս երկրի ժողովրդի համար։ Դրա հետևանքն այն է, որ զանգուածները աշխատաւորական մ՚տածելակերպով չեն դաստիարակուած։ Եւ շատ տեղեր անարժան մարդիկ գործի գլուխ կանգնելով, վնասել են գործին։

Այս ամենը և որոշ տեղեր ռուսական զօրքի մուտքը, ճնշումներն ու հալածանքը յեղափոխական ու ազատական տարրերի դէմ՝ ունեցել են իրենց խիստ բացասական ազդեցութիւնը մեր շարքերի վրայ։

Եւ այսօր արտի դառն կսկիծով է, որ պէտք է խոստովանենք, թէ մեր շրջանի իւրաքանչիւր վայրում յոյսերը խաբուած, ոպասելիքները խորտակուած, դէպի յեղափոխութիւնն ու նրա ղեկավարներն ունեցած հաւատը մարած, դէպի մեր ձգտնարկներն ունեցած վստահութիւնը կորած; ընկերներից շատերը լքուած, շարքերը քայքայուած են։

Ահա թէ ինչ է ժառանգում՝ կ. կ. նախորդ տարիներից և ինչով ու ինչ պայմաններում պիտի աշխատի իրագործել մեր կուսակցական սկզբունքները, Ռ. և Շ. ժողովների որոշումները։

Այնուամենայնիւ, մենք վստահ ենք մեր գաղափարների յաղթանակին ու մեր շարքերում մնացած սակաւաթիւ ընկերների վրայ։ Եւ նրանց բարոյական ոյժի վրայ յենուած՝ այսօրուանից գալիս ենք մեր մեծ կազմակերպութեան դրօշը նորէն պարզելու, մեր ժողովրդի գործին ծառայելու։

Ընկերներ նօսրացել են մեր շարքերը... քիչ է մեր թիւն այսօր, բայց վաղը նա կ՚աճի։ Եւ այժմ աւելի քան երբեւիցէ, մեր սակաւաթիւ գիտակից ընկերների վրայ է ընկնում անդուլ ու անխոնջ աշխատելու, գործելու պարտականութիւնը։ Նրանց վրայ է ընկնում Կ. Կ.-էիս և մեր շրջանի մարմինների շուրջը հաւաքելու, խմբելու պարտականութիւնը։

Ցուսահատելու տեղիք չկայ. պայմանները ճիշտ գնահատելով, չարիքին ու վտանգին համարձակ նայելով, ուղղամիտ քաղաքականութեամբ ոչինչ չենայենք կազմակերպելու մեր աշխատանքը, վերակազմելու մեր շարքերը, բարձրացնելու նրա գիտակցութիւնը, դաստիարակելու նրան աշխատաւորական իդէալներով, համախմբելու մեր շուրջը ինտելիգենցիան և խմորելու մեր գաղափարներով մեր հաւատարիներին։

Կեցցէ՛ գիտակից ու մարտնչող աշխատաւորութիւնը։
Կեցցէ՛ Հ. Յ. Դաշնակցութիւնը։

ՇԱՀՍՏԱՆԻ ԿԵՆՏՐ. ԿՕՄԻՏԷ

Օգստոս 8-ին, 1913 թ.

ԹԵՐԹՕՆ

ԻՄ ԲԱՆԴԸ

VI

ՀԻՒԱՆԴԱՆՈՑՈՒՄ

Հիւանդութիւնս ծանրացաւ։

Կուրծքս աւելուում էր դանդաղօրէն, հազում էի ու արիւն թքում. յետոյ փորահարինքը. բանդային փորահարինքը, արեան կորուստը արագութեամբ քամում, հիւծում էր ինձ։

Բանդային բժիշկը, ազնիւոգի մի վրացի, բարեկամօրէն խորհուրդ էր տուել ինձ հիւանդանոց չգնալ. «բանդային հիւանդանոցը կատարեալ սպանդանոց է և ես անզօր եմ. այնտեղ գնում են մեռնելու համար», ասել էր նա ինձ։

Բանդապետը, սակայն, կարգադրեց ինձ հիւանդանոց փոխադրել, որովհետև, ինչպէս յետոյ իմացայ, իմ սենեակը լաւերից էր, իսկ այդպիսի սենեակները բանդապետը ծածուկ կերպով վարձու էր տալիս հարուստ կալանաւորներին։ Եւ արդարև, իմ հեռանալուց անմիջապէս յետոյ՝ սենեակս տուեց մի հարուստ թիւրք աւազակի — ամիսը հարիւր ռուբլով։ Մի ուրիշ թիւրք, մարդասպանութեան համար բանդարկուած իր եղբօր հետ, հաւատացնում էր ինձ, որ իր սենեակի համար վճարուում է բանդապետին որպէս կաշառք, ամիսը երկու հարիւր յիսուն ռուբլի։ Այդ բանդապետն այժմ ձերբակալուած է կաշառակերութեան համար և յանձնուած է դատաստանի։

Եւ այսպէս՝ ինձ փոխադրեցին հիւանդանոց. կալանաւորը կամք չունի, հնազանդուեցի։

— Ես պատւիրել եմ ձեր սենեակը մաքրել, սպիտակցնել, հիւանդներից մի քանիսին դուրս տանել այլ սենեակներ, դուք այնտեղ հանգիստ կը լինիք, ասաց բանդապետը նկատելով իմ դժկամակութիւնը։

— Ու ձեզ ընկեր կ՚ունենաք, շարունակեց նա ժպտալով, մի հրեա բժիշկ, որ թէև մի փոքր տարօրինակ է, ինչպէս և իր գրծած յանցանքը, բայց վերջապէս բժիշկ է, կրթուած մարդ։

Հիւանդանոցի ամենասփփիչ պարագան այն էր, որ սենեակս երկու մեծ լուսամուտ ունէր, որտեղից բացւում էր լայն հորիզոն մինչև Կասպից ծովը։ Առաջ բակն էր, ուր զբօսնում էին Կալանաւորները և ես հնար ունէի դիտել ամենքին։ Յետոյ լայն միջանցքի արևելեան ծայրին մի ուրիշ մեծ լուսամուտ, որի առաջ փռուում էր լայնարձակ ծովը մինչև կապտաւուն, մշուշապատ հորիզոնը։ Հով ու կեանք էր փչում այդ լուսամուտից, ինչպէս և այնքան գողտրիկ երազներ։

Եւ այս առաւելութիւնների հետ այդ նզովուած հիւանդանոցը ո՞րքան սարսափներ էր պահել ինձ համար։ Օգոստոս ամիսն էր, տարւայ ամենաշոգ ժամանակը մեր

կողմերում։ Դէպի հարաւ նայող լուսամուտներից արեգակը առաւօտից մինչև երեկոյ՝ շողերի տեղ հալած երկաթ էր թափում. ու ամբողջ օրը թրծուած պատերը գիշերներն էլ մեզ լափում էին, խեղդում տօթի մէջ։

Խենթացնելու չափ շոգ էր. խաւարի հետ յայտնւում էին անթիւ, գարշահոտ միջատները, որոնց դէմ պայքարելու համար ո՛չ մի հնար. սենեակի բոլոր ճեղքերը, պատերն ու յատակը, անկողինները, մեր զգեստները ողջ ճաթկւած էին միջատներով. և մենք ցերեկը տօթից էինք վազում պատէպատ, երկաթները չանգռում կատաղութիւնից, իսկ գիշերները անկողինների վրայ թաւալ տալիս միջատների խայթոցից ու տօթից։

Այդպէս էին բժշկում, խնամում մեզ հիւանդանոցում։

Ա՜յդ հիւանդանոցը...

Իրար կողքի, իրար վրայ շպրտւում են և՛ թոքախտաւորն ու պարզ տենդ ունեցողը և՛ վեներական վերքերով տառապողն ու տիֆ ունեցողը, և՛ մահամերձն ու ապաքինւողը, ամենքը, ամենքը, ֆելտշերների քմահաճոյքով, որոնք տէր են այստեղ ու ըստ իրենց քմահաճոյքի խաղում են այդ թշւառ, անտէր բազմութեան կեանքերի հետ, վարձու են տալիս սենեակները, վաճառում են տեղը, փոքրիկ յարմարութիւնը, մի տանելի անկիւնը։ Աւելի դժբախտ են փոքրահասակ կալանաւորները, որոնց տեղաւորում են կատաղի ոճրագործների հետ, յաճախ ախտաւոր հրէշների հետ։ Հազիւ 10—15 տարեկան այդ մանուկները ստիպւած են շնչել յանցանքներով ու պղծութեամբ յղփացած մթնոլորտը, ապրում են անասելի գարշանքներ ու սոսկումներ, գիշերները գողում են աղտոտ տեսարաններից, լալիս են, ճչում ու յետոյ ընկնում են ու տարւում նոյն զազիր հոսանքով։ Երբէք, երբէք չպիտի մոռանամ այն 14—15 տարեկան հայ պատանին, որ նետւած էր հարևան սենեակ հինգ ոճրագործ թիւրքերի մէջ. լապտեր վառողը մի օր կամացուկ ինձ ասաց, թէ այդ սենեակում ոճիրներ են կատարւում դժբախտ երեխայի հետ։ Մտրակւած ձիու պէս հոգիս ծառացաւ. դիմեցի, ճչացի, աղերսեցի և անզօր եղայ փրկելու այդ մանուկը պղծութեան ճիրաններից։

Ֆելդշերները վաճառւած էին...

Երբէք չպիտի մոռանամ և այն երիտասարդին, որ մրրկի պէս ընկաւ իմ սենեակը դատ ու արդարութիւն հայցելու բժշկից, որ այդ ժամին ինձ մօտ էր։ Վերակացուն բանալիների խուրձով հարւածել էր նրա գանկին, արիւնը ճառագայթաձև կարմիր գծերով հոսում էր գագաթից դէպի վար յօնքերի, աչքերի, քունքերի ու ծոծրակի վրայից, իջնում, թրջում էր կուրծք ու թիկունքը. անկարելի էր առանց սոսկումի նայել այս պերակ արիւնազանգ գլխին, ասես խեղկատակութեան համար բոսոր, լայն գծերով շերտաւորւած դէմքին ու աչքերն ու շրթունքները ծեփւած էին կարմիր մածուցիկ հեղուկից։

— Բժիշկ, բժիշկ, ախր մեզ կոտորում են հիւանդանոցում, ճչում էր դժբախտը ձեռքերը տարածած։

Բժիշկը ուսերը թօթուեց անյուսօրէն և գլուխը քաշ ընկաւ անզօր։

Ցետոյ իմ շրջապատում, հարևան սենեակներում վարակիչ ախտերով բռնւած, վէրքերով պատած ու կենդանի հոտող մարմիններ, որոնք գարշահոտութիւններով լցնում էին միջանցքը. հիւծւած ու արիւն փսխող թոքախտաւորներ, որոնք հազիւ են քաշ տալիս երենց ոսկորները, բայց միշտ շղթայւած՝ անգամ օրհասի ժամին, մահւան ճիրաններում. տենդի մէջ զառանցողներ, ճչացողներ, որոնք կատաղօրէն խեղդում են իրենց հարևան հիւանդին կամ զազիր պղծութեան անձնատուր լինում թոյլ ու անզօրների վրայ։ Ամեն կողմ ողբ, անքոց, հառաչանք, ատամների կրճտոց ու հայհոյանք, ծեծ ու ոռնոց, պղծութիւն ու գարշանք։ Ու ամբողջ այդ շէնքը, որ հիւանդանոց է կոչւում, իր վէրքերով ու ախտերով, իր գարշահոտ քայքայւող մարմիններով ու ախտերով մի հսկայական հրէշ է, որ թաւալւում է աղբերի մէջ տանջանքի գալարներով, ինքն իրեն խածոտում, պղծում և ոճիրներ գործում ցասումի, կրքի ու կատաղութեան ժամերին։

Բանդը ինքնին սարսափն է, անէծքն է, բայց բանդի հիւանդանոցը — դա անուն չունի, դա մարդկութեան երեսի թուքն է։

Դժբախտ, լկտի ու պիղծ, որպէս մարդն ինքը։

***

„Բժիշկ ընկերակիցդ մի փոքր տարօրինակ է“, ասել էր ինձ բանդապետը հիւանդանոց գալուց առաջ։ Եւ ես անհանգստութեամբ ու հետաքրքրութեամբ սպասում էի տեսնել, թէ ի՞նչ է այդ տարօրինականութիւնը։ Ցակաւին երիտասարդ մի մարդ էր, մօտ երեսուն-երեսուն հինգ տարեկան, շիկահեր, բարեկազմ, հրեական խիստ շեշտւած դիմագծերով, հաստ շրթունքներով ու յետ ընկած ճակատով։ Աչքերը, սակայն, մի տեսակ երազական ասես, թէ արբեցութեան արտայայտութիւն ունէին, թախծի հետ խառն։

Առաւօտեան տեսայ նրան առաջին անգամ և մինչև ճաշ աչքերի տխուր, ցնորական արտայայտութիւնը կամաց կամաց տեղի տւեց նախ մի անորոշ անհանգստութեան, ապա մի չարագուշակ կատաղութեան։ Նա էլ իր տեղում նստել չէր կարողանում, քայլում էր պատից պատ, արագ-արագ, դէմքը ծռմռում էլ։ զայրացկոտ հայեացքներ նետում ինձ վրայ, որից ես անախորժ ցուրտ էի զգում, երբեմն կարծես պատրաստւում էր լալ։ Ապա մօտեցաւ դրան անցքից վերակացուին խնդրեց դուրս թողնել իրան, մերժում ստանալուց յետոյ դարձաւ թափով, ինձ նայեց ատամները կրճատցնելով ու հրացայտ աչքերով, այնպէս որ ես սպասում էի, հիմա

— Բժիշկ, բժիշկ, ախր մեզ կոտորում են հիւանդանոցում, ճչում էր դժբախտը ձեռքերը տարածած։

Բժիշկը ուսերը թօթուեց անյուսօրէն և գլուխը քաշ ընկաւ անզօր։

Ցետոյ իմ շրջապատում, հարևան սենեակներում վարակիչ ախտերով բռնւած, վէրքերով պատած ու կենդանի հոտող մարմիններ, որոնք գարշահոտութիւններով լցնում էին միջանցքը. հիւծւած ու արիւն փսխող թոքախտաւորներ, որոնք հազիւ են քաշ տալիս երենց ոսկորները, բայց միշտ շղթայւած՝ անգամ օրհասի ժամին, մահւան ճիրաններում. տենդի մէջ զառանցողներ, ճչացողներ, որոնք կատաղօրէն խեղդում են իրենց հարևան հիւանդին կամ զազիր պղծութեան անձնատուր լինում թոյլ ու անզօրների վրայ։ Ամեն կողմ ողբ, անքոց, հառաչանք, ատամների կրճտոց ու հայհոյանք, ծեծ ու ոռնոց, պղծութիւն ու գարշանք։ Ու ամբողջ այդ շէնքը, որ հիւանդանոց է կոչւում, իր վէրքերով ու ախտերով, իր գարշահոտ քայքայւող մարմիններով ու ախտերով մի հսկայական հրէշ է, որ թաւալւում է աղբերի մէջ տանջանքի գալարներով, ինքն իրեն խածոտում, պղծում և ոճիրներ գործում ցասումի, կրքի ու կատաղութեան ժամերին։

Բանդը ինքնին սարսափն է, անէծքն է, բայց բանդի հիւանդանոցը — դա անուն չունի, դա մարդկութեան երեսի թուքն է։

Դժբախտ, լկտի ու պիղծ, որպէս մարդն ինքը։

***

„Բժիշկ ընկերակիցդ մի փոքր տարօրինակ է“, ասել էր ինձ բանդապետը հիւանդանոց գալուց առաջ։ Եւ ես անհանգստութեամբ ու հետաքրքրութեամբ սպասում էի տեսնել, թէ ի՞նչ է այդ տարօրինականութիւնը։ Ցակաւին երիտասարդ մի մարդ էր, մօտ երեսուն-երեսուն հինգ տարեկան, շիկահեր, բարեկազմ, հրեական խիստ շեշտւած դիմագծերով, հաստ շրթունքներով ու յետ ընկած ճակատով։ Աչքերը, սակայն, մի տեսակ երազական ասես, թէ արբեցութեան արտայայտութիւն ունէին, թախծի հետ խառն։

Առաւօտեան տեսայ նրան առաջին անգամ և մինչև ճաշ աչքերի տխուր, ցնորական արտայայտութիւնը կամաց կամաց տեղի տւեց նախ մի անորոշ անհանգստութեան, ապա մի չարագուշակ կատաղութեան։ Նա էլ իր տեղում նստել չէր կարողանում, քայլում էր պատից պատ, արագ-արագ, դէմքը ծռմռում էլ։ զայրացկոտ հայեացքներ նետում ինձ վրայ, որից ես անախորժ ցուրտ էի զգում, երբեմն կարծես պատրաստւում էր լալ։ Ապա մօտեցաւ դրան անցքից վերակացուին խնդրեց դուրս թողնել իրան, մերժում ստանալուց յետոյ դարձաւ թափով, ինձ նայեց ատամները կրճատցնելով ու հրացայտ աչքերով, այնպէս որ ես սպասում էի, հիմա

ինձ վրայ կը նեաւի ու կոկորդս կը բռնի։ Բայց ո՛չ, նա կուրծքը բռնեց, ահագին ձայնով ճչաց՝ «Չեմ կարող, օ՜, չեմ կարող Աստուած իմ, ու ընկաւ իր անկողնի վրայ հեկեկալով։

Մնացել էի շւարած. ի՞նչ ունի այս մարդը։

Անհանգստութեամբ, գրեթէ երկիւղով մօտեցայ, ձեռքս ուսին դրի ու քաղցրութեամբ հարցրի, թէ ի՞նչ ունի դժբախտը.

— Ես պիտի սրսկեմ, հասկանո՞ւմ էք, մորֆի պիտի սրսկեմ, մեռնում եմ... իսկ դուք... դուք ինձ խանգարում էք... ինչո՞ւ եկաք այս սենեակը... ինչո՞ւ եկաք, անողորմ... դուրս գնացէք, դուրս, դուրս, դուրս... և ուժեղ ձեռքով յետ շպրտեց ինձ։

Ցեռ ընկայ անկողնիս վրայ, չգիտէի օգնութի՞ւն կանչել, պաշտպանուե՞լ, նորից մօտենալ փորձել, հանգստացնել թէ՞ լաց լինել իմ և այս խելագարի ճակատագրի վրայ...

Հաւատացած էի, որ խելագար է...

Բայց նա երկար չթողեց ինձ մտածել, արագութեամբ մերկացաւ իսպառ, ապա հանեց գլխատակից սպիտակ հեղուկով լի մի սրուակ, մի քանի ասեղներ և մի կողմից լալով ու հեւալով, շտապ շտապ սրածայր մետաղները տնկեց իր միսերի մէջ և մորֆին ներարկեց։ Արիւնը հոսում էր խոցած տեղերից, բայց մարդը դեռ շարում էր ասեղները և մի քանի րոպէ յետոյ՝ նրա բազուկները, ստրերը, կողերը ծածկուած էին ասեղներով և ամեն կողմից կարմիր հեղուկը ծորում էր նրա մորթի վրայով։

Ու դժբախտ արարածը կամաց կամաց հրճւում էր, դէմքը պայծառանում էր, աչքերի մէջ փայլում էր անասնական ուրախութիւն, ասես մէկը հէնց նոր մի երջանկացնող լուր աւետեց նրան։

Ապուշ կտրած ու նողկանքով ես հետևում էի այս զզուելի, այս ստորացուցիչ տեսարանին, չ՝իմանալով ի՞նչ անել։ Վերջապէս նա կշտացաւ թունաւոր հեղուկից, ասեղները դուրս քաշեց, բամբակի կտորներով արիւնը սրբեց, զգեստները հագաւ, ժպտաց ինձ անուշութեամբ ու միանգամայն կերպարանափոխուած՝ վեր կացաւ եկաւ ձեռքս բռնեց ներողութիւն խնդրելու իր կոպտութեան համար։

— Սա իմ դժբախտութիւնն է, չեմ կարող, մորֆին իմ կեանքն է, իմ երջանկութիւնը, ասում էր նա, զզուելի եմ, այնպէս չէ՞... բայց հնար չկայ... Ձեզնից ամաչում էի, ձեր ներկայութիւնը ճնշում էր ինձ, առաւօտից տառապել եմ ձեր պատճառով, խնդրում եմ ներէք և չնայէք ինձ երբ... ու նա քահ քահ ծիծաղեց, մատով շրխկացրեց, ապա սկսեց յետ ու առաջ ման գալով երգել մի ուրախ եղանակ։

Մարդը յուփշտակութեան, երջանիկ վերացումի մէջ էր։ Այնուհետև օրական տասն քսան անգամ, նաև գիշերները, նա մերկանում էր իսպառ, ասեղներ է տնկում մարմնի վրայ և թունաւոր հեղուկը ներս ածում։ Կամաց կամաց նրա մոլութիւնն այնքան մեծացաւ, որ գրեթէ մերկ էր շրջում, միշտ պատրաստ լինելու համար։ Մարմնի վրայ էլ տեղ չկար, ողջ վէրքերէն, շապիկը միշտ կարմիր, սրուակը միշտ ձեռքում։ Ի զուր անցան իմ խնդիրները, խորհուրդները, ներշնչումները, իմ նոյնիսկ վիրաւորանքները, որ ես նրան հասցնում էի մի փոքր մեղմելու այդ զզուելի մոլութիւնը, մի փոքր չափ դնելու այդ կատաղութեանը։ Նա խենթանում էր։

Արկածալից, սարսափելի կեանք էր ունեցել այդ թշուառականը շնորհիւ իր երկրորդ մոլութեան՝ գողութեանը։ Ռուսաստանի գրեթէ բոլոր նշանաւոր քաղաքներում բանտ էր նստել ամիսներ ու տարիներ, ծեծուել էր անթիւ անգամ, կրել անթիւ զրկանքներ ու միշտ գողութեան համար։

Գիշերները նա աւելի անտանելի էր դառնում։

Մշտապէս սև մղձաւանջի մէջ՝ նա ոռնում էր, մրմռում, լալիս, աղերսում քնած ժամանակ, ճմռում էր վերմակը, բարձը, չանգռում էր կուրծքը ասես մի անասելի ցաւից, կամ ցատկում էր նստում, խելագարի պէս չորս կողմը նայում չռած աչքերով, առանց լաւ տեսնելու, ու գանգատւում էր, թէ ես ուզում եմ իրեն թունաւորել, խեղդել, թէ թունաւոր փոշի ածեցի վրան մահացնելու համար։

Ահա սա էր իմ ընկերակիցը հիւանդանոցում, այս եղկելի թշուառականը, որ իմ կեանքն էլ դժոխք էր դարձրել ցերեկը իր ժահրոտ, արիւնոտ վէրքերով, գիշերը իր ճիչ ու ոռնոցով, իր խելագար սպառնալիքներով։

Ու ցաւս մոռացած՝ այնպէ՛ս տառապում էի. խնդրեցի յետ տանել ինձ իմ բանդասենեակը, ազատել հիւանդանոցից, ազատել այս խելագարի ներկայութիւնից. ի զո՞ւր, ես դատապարտուած էի կրկնապէս, դատապարտուած էի լռութեամբ կրել անազատ, հիւանդ կեանքի բոլոր դառնութիւնները ու այս ցաւագար դժբախտի պատճառած բոլոր սարսափները։

Եւ կրեցի... մինչև որ դատական իշխանութեան կարգադրութեամբ նրան փոխադրեցին քաղաքի հոգեկան հիւանդների տունը, մաւոր կարողութեան և պատասխանատուութեան աստիճանը սահմանելու համար։

Յետոյ՝ շատ ուշ իմացայ, որ դոքտոր Ռոզենբերգը — այսպէս էր նրա անունը — փախել է հիւանդանոցից, քաղաք է ընկել փողոցից՝ փողոց, տնից՝ տուն, ի վերջոյ կարողացել է երկաթուղի նստել և խոյս տալ դէպի հիւսիս։

Ճամբին սակայն հետամտող պահակների գնդակից ընկել էր ողորմելին։

Այսպէս վերջացրեց իր արկածալից կեանքը։

Բ. ԱՍԱՏՈՒՐ

ՏԱՐԱԳԻՐ